

# ՎԱՅՈՑ-ԶՈՐ

Ե. ԼԱՎԱՐԵՆԴՐԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Տայով Վայոց-Ճորի մանրամասն անդապրութիւնն ու քարտէզը (Աղդապրական Հանդէս ՀՊ) ես առանձմապէս կանգ եմ առնելով նրա վաճքերի վրայ, որովհետեւ սրանք նշանաւոր են ոչ միայն պատմական, այլ և ճարտարապետական տեսակէտից: Ես սրանց նկարագրութիւնը դաստիարակ եմ ոչ թէ աելապրութեան համեմատ, ինչպէս ընդհանրապէս կատարում է, այլ ժամանակագրական կարգով, որպէսզի աւելի հեշտ լինի գծելու Վայոց-Ճորի պատմութեան և ճարտարապետութեան էվոլյուցիան:

Այս վաճքերի լուսանկարներն առաջին անգամ (1904 թ.), ես անձամբ հանեցի, ոտկայն մի աւազակային խումբ այլ իրերիս և ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ նիւթերիս հետ տարատնաւ այդ նեղատիւները, ուստի 1908 թ. լուսանկարիչ Նըմակովին իմ անձնական միջցաներով տարայ ինձ հետ և նրա համած լուսանկարներից կազմեցի մի լուսանկար-ալբոմ: Դժբաղդաբար նիւթականի սպութիւնը թոյլ չէր տալիս հրատարակելու այդ լուսանկարը ալբոմը Փատոսակալիայով, որով մատչելի կը գալանար շատերին, մինչդեռ լուսանկարաշախներ ձեռք բերին միայն արտասահմանի և ռաւստց լոյտնի թօնգարաններն ու գիտական հիմնարկութիւնները և միջանք անձնաւորութիւններ, ինչպէս Վ. Ս. Միտոյեզ, որ մեծապէս օգտըսեց զրանից: Այժմ ա. Հայկանոյշ Մարտիրոսեան, Աղդապրական Ընկ. Խորհրդի փոքր նախագահուհին, ընկերութեան արտադրութեան ներքոյ զբեց 1500 թ. այդ ալբոմը Փոտոտիպիայով հրատարակելու, ուստի և նրա մանրամասն նկարագրութիւնը տպագրում ենք Աղդապրական Հանդիսի այս զբեցում, ցուցումներ տալով ընթերցաղներին:

պատկերները նայելու այդ ալբոմի մէջ, Եկեղեցիների յատակագծերը յատկապէս ինձ համար պատրաստել է պ. Տարագրոս Վարդանեանը, այն անձնաւորութիւնը, որ պ. Սիսոյեվի համար ևս կատարել է մինոյն աշխատանքը, նւ որովհետեւ պ. Սիսոյեվը, հակառակ Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան Կովկասուան ճիւղի 1911 թ. նոյեմբ. 12-ի նիստում իմ բողոքի պատճառով տուած խոսման՝ շօգտուի իմ լուսանկար ալբոմի Եկարներից մինչև ֆոտոտիպիական հրատարակութիւնը\*), մեծապէս օգտուեց. այս պատճառով և Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան նախագահուհի կոմոսուհի Ռվիզորովն, լսելով իմ բողոքը, զբեց իմ արամագրութեան ներքոյ այն արձանագրութիւնների և օճամնեաների քլիշաները, որ շնուրած էին իմ լուսանկարներից և այն յատակագծերինը, որոնք յատկապէս պատրաստել էր նաև ինձ համար պ. Տարագրոս Վարդանեանը՝ իմ խընդրով կրկին անգամ այցելելով այդ վանքերին.

Այսանդ տպուած արձանագրութիւններն իրենց լուսանկարներով մտել են իմ «Հայկական արձանագրութիւններ» աշխատութեան մէջ ևս, որ արժանացաւ Լազարեան նեմարանի Քանանեան մըցանեկին 1914 թուին:

\* ) Известия Кавказского Отделения Императорского Московского Археологического общества. вып. III. стр. 64.



## ՆԵԱՆԱԻՈՐ ՎԱՆՔԵՐ

### ՑՆՑԵՎԱՆՔ

Տեղադրութիւն.—Վայոց-ձորի ամենահին և ճարտարապետական տեսակէտից բաւական նշանաւոր այս վանքը տեղաւորուած է Սրբաչայի հրաշագեղ հովտում, Գնդեվազ գիւղից հազիւ կէս կիլիմետր հեռու (Տես Ալբու պատկեր I. 1.):

Այստեղ միանգամ ևս շեւառում է այս հանգամանքը, որ մեր վանքերը մեծ մասամբ բարձրանում են ընութեան սրանչելի տեսարաններով օժառակ վայրերում, չը որ զեղարուենաց բարձրացընելով մարդու հոգին, տանում է զէսի զեղեցկութեան ախարի պաշտամունքը:

Սա մի անզնացախոր ձոր է, որի միջով գալարւում է հարիբանեայ ընկուզենիների և ծիրանիների հովասուն սաղարթներով հովանաւորուած արծաթափայլ Արփաչայը, Զորի եզրին բեւեռուած խոխոմաձիգ ժայռերի խոռոշների ձեզուններից վիժուալ բիւրդանման ցայտերը խաղալով ժայռի ամէն մի ձերդից կենդանութեան զիմոն բրյսերի երփներանդ տերմների և արևի կենաւառ ճաճանչների հետ ձայնակցում են ընութեան հրտադրով հարբած թռչունների դայլայիկին:

Ցիրաւի զեղեցկութեան մասանի է այս ձորը, որի ակը կազմում է Սովիա տիկնոջ պարզեած Գնդեվանքը, այժմ դարերի փոշոց փայլը կորցրած:

Մի սասաիկ քարքարոտ ճաճապարհ Գնդեվազ գիւղից ոլորդապոյտ իշխում է մինչև Գնդեվանքը:

Պատմական տեսութիւն.—Այս վանքի մասին օբբելեանը հետեւեալն է պատմում (Դ. Ծ.):

Սիւնեաց Սմբատ իշխանի երանելի ու բարեպաշտ կին Սովիան, (որ Դերենիկ Արծրունու ազդիկն էր), ուխտ է գնում այն ճառածոր վայրը, որ Գնդեվանք է կոչւմ, ուր կային սուրբ

վկաների բազմաթիւ նշխարներ, և ուր բնակում էին միայնակեացներ։ Տիկինը ստոտիկ հաւանելով տեղին, մտածում է մի եկեղեցի կանգնել այդտեղ։ Գիշերը ու վկանելն երևում են նրան և խնդրում կատարել մատղրութիւնը Ռւստի և անժիջապէս քարտաշներ է կանչել տալիս և սկսում շինութիւնը, վերակացու կարդելով Սահմակ քահանային և գործակալ Եղիշա բանանայ նկարչին, իսկ վանքի տարտման հոգարաձութիւնը յանձնում է Յակոբ անունով մինինն Խոր ճգնութեամբ փայլում էր այստեղ նաև Սուսափան Գնդունին Շինում են Աստծու տռուն և նկարներով զարդարում առաստացն ու պատերը և մեծանալով ժողովով օրինում են ու անուանում ու վկաների անունով և բնակեցնում են այգանեղ պաշտօնեաներ ու կրօնաւորների բազմութիւն։ Նաև ամբողջ ձորի պատշաճաւոր տեղերում շինում են անապատներ և բնակեցնում նրանց մէջ ճգնաւորներ։ Երանելի տիկինն անուանում է այս վանքը Գնդեվանք, և շինում է վանքի վերն, քարի գիրին, մի գիր և ժառանգութիւն է տալիս եկեղեցուն, ազտակացուցաննոր ամէն տեսակ հարկերից։ Եւ այս լինում էր Հայոց 385 թուին (Թրիստոսի 936 թ.)։ Նայնպէս այս վանքին է յատկացնում Առշար գիւղը, իսկ ամբողջ ձորը վերից վայր մինչև Գոլոշտի քար առուած տեղը հրամայում է պտղատու ծառեր տնկել և այգիներ ձգել։ Ապա գրում է իւր յիշատակարանը, որ վերջանում է հնտեսալ գեղեցիկ բացարութիւնով։

Մատանի էր անակն Վայոց ձոր, սինեցի զատ եւ եղի ակն ի Վերայ։

Մի բանի տարի յետոյ, Հայոց 448 թ. (Թր. 999 թուին) Թրիստափոր վանահայրը շինում է եկեղեցու գաւիթը, նաև երանելի և առոր հայր Դուրգէնը ևս մեծ յիշատակներ ունի այդ վանքում։ Շատ արքիներ յետոյ, 2008 թուին, այս վանքի վանահայրը Տէր Սարգիսը Զինարած գետից ջուր է բերում վանքը։

Այս մենաստանը շատ անգամ վերանորոգուած է, սակայն վերանորոգուներից միայն երկուսի անուններն են յայտնի, մինը՝ մի ուն Գրիգոր, 1309 թ., և միւսը՝ Պետրոս վարդապետը, 1672 թուին Վերինին շինել է նաև գիւղի եկեղեցին։

Հատուկուր արձանագրութիւններից և Օրբելեանի վկայութիւններից երեսում է, որ վանքի առաջնորդներ եղել են.

Սուփան Գնդունին, 930 թուականից առաջ.

931—6 Հայր Սարգիս.

969 Թրիստափոր.

... Գուրգէն.

1008. Սարգիս թ.

1307. Գրիգորէս.

? Առաքէլ.

1685—91. Տէր Պետրոս.

1875. Յովհաննէս Տէր Յարութիւննեան.

... Պետրոս վարդապէտ Յաթնացի.

1899 միջն 1916 թ. Մամբրէ վարդապէտ Յովհաննեաննեան Ռշտունիք, Նոր գիւղից:

Այս վանքի մասին Քննկելազցի Մարտիրոս Գրիգորեան բնաւուն և հինգ ամեայ ծերունիքն, որի հայրը 120 տարի էր ապրել, պատմեց ինձ հանձնակ աւանդութիւնը:

Քննկելազցի վանքի տեղուուն Նախավկայի անունով մի ուխտատեղի է եղել, ուր ուխտ է եկել հակ Սմբատ թագաւորի կին՝ Սոփիա տիկինը: Սա կամեցիլ է այսուղ մի վանք շինել և նոյն գիշերն երազում տեսել է մի մարդ, որ ասում է իրեն. «Սոփիա խանուն, այդ բանը որ մտածեցիր՝ կատարիր»: Տիկինն առաւօտան ձեռնարկել է վանքի շինութեան և երբ աւարտել է՝ հրաւիրել է այս ձորի այրերուուն ճգնող ճգնաւորներին այդ անդ տեղափոխուելու: Մրանց մէջ եղել է նաև Օվաննէս անունով մի ճգնաւոր՝ որ չափացաց ծեր լինելով չի կարողացել կանգնել և միշտ նստած է աղօթել, այս պատճառով էլ նրան կոչել են Գուման Օվաննէս: Սա դառն է վանքի առաջին վանահայրը, այս պատճառով էլ վանքը նրա անունով կոչուել է Գուման Օվաննէս—Գընա տավազ: Մի առ ժամանակից յետոյ էլ այսուղ եղել են Պետրոս անունով մի բանահայ և Մարգիս անունով մի վարդապէտ: Մրանց խորհուրդ են արել, որ վանքի մօտ մի գիւղ ձգեն, որ գիւղի նրա արքիներով վանքը կառավարուի: Պետրոս քահանան շինել է մի եկեղեցի, իսկ Մարգիս վարդապէտը երեք տարի շարունակ ահազին ծախսեր անելով արխ է փորել, որ ջուր բերէ: Բայց ջուրը չի եկել Վերջը մի գիշեր երազում տեսել է մի մորդ, որ առել է, թէ արի ցոյց տամ, թէ որտեղից պէտք է արինը ձգեն՝ որ ջուրը գայ: Եւ տարել, ցոյց է տռւել: Մարգիս վարդապէտն առաւօտ վեր է կացել, այդ ցոյց տռած տեղով արխ փորել տռւել և ջուրը բերել: Այդ օրուանից այզտեղ գիւղ է հիմնուել:


Վանքը երկար ժամանակ շին է եղել, բայց յետոյ Շահ-Աբասը աւերել է և գնդելազցիներին գերի տարել:

Վերջին տարիներս միայն Խաչիկից և Կնիշիկից հոյերը հաւաքուել են և թուրքերից հնուու մի առանձին Բաղ կազմել:

Վանքի նկարազութիւնը.—Վանքը շինուած է սե, որբա-

առաջ բարեկով։ բաղկացած է մի եկեղեցուց և մի գաւթից։ (Տես  
Ալբում I 2):

Եկեղեցին արտաքուսա գրեթէ քառակուսի է ( $12 \times 11$  մետր),  
իսկ ներքուսա ( $10 \times 9$  մետր) խաչաձև։ (տես նկ. 1) չորս թե-  
ւերն էլ կիսաբոլոր են։ Արևելեան կողմն ունի երկու խորան  
( $3 \times 5$  մ. և մաս 3 մետր բարձր), որ ըստ երեսութին յետոյ են  
շինուած, այնպէս որ  
եկեղեցին սկզբում ար-  
տաքուսա ևս խաչա-  
ձև է եղել, միայն ոյս  
խորանները և գաւթիթը  
շինելով դառնել է քա-  
ռակուսի։ Եկեղեցու  
սեղանը մի մետր բար-  
ձրութեան է և երկու  
կողքերից երեքական  
աստիճաններ ունի։ Կո-  
ղակը կամարակապ է  
և կիսաբոլոր, զար-  
դարուած նկարներով։  
որոնցից մինչը՝ ու Աստ-  
ուածածինը՝ դեռ ես  
նկատելի է (տես նկ.  
2):



Ֆ.

Նկար 1

Ների վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, որոնց վրայ  
բարձրանում է գմբէթը, և որոնց միացման անկիւններում քան-  
դակուած են չորս աւետարանիչների յատկանիշները։

Արտաքուսա բոլոր պատերի մէջ ևս կան երկական ներսան-

եկեղեցին ունի չորս  
քառանկիմնի որթաս-  
սիւն, իւրաքանչիւրը  
երեք կիսասինից բար-  
կացած, որոնք հանդ-  
չում են քառանկիմնի-  
խարիսխի վրայ և վեր-  
ջանում նախ կիսա-  
բոլոր և ազա քա-  
ռանկիւնի խոյակով։  
Այս չորս որթասիւ-

կուտած. Հարաւային և արևմտանան պատերի մէջ բացվում են մի մի դռն, որնցից արևմտեանը թէ աւելի լայն է ( $1,50 \times 1,10$  և  $2 \times 0,88$  մետր) և թէ աւելի գեղեցիկ նպրաֆակ երեց կիսասիւների վրայ բոլորում է մի կիսաբույր կամար, որի վերև կանգնած է մի գեղեցիկ խաչարձան, ինկ սրանից բարձր բացվում է



Նկար 2

մի պատուհան, ունինալով աչ ու ձախ կողքերին մի մի խաչքար։ Հարաւային դրան վերև ևս կայ մի պատուհան, պայտաձև կամորով. նկատելի է, որ առ վերաբերում է վերանորոգութեան ժամանակին, մանաւանդ որ սրա վրայ կայ մի խաչքար, որ ոչ թէ կանզնեցրած է, այլ ագեղ կերպով պառկեցրած իրը շինութեան քար։ Մի գեղեցիկ վարդապարդ էլ բարձրանում է հիւսիսային պատի երկու ներսանկուածների միջև։

Դմբէթի թմբուկը տասնվեց անկիւնանի է, բաւական լայն, 4,5 մետր տրամագծով և ցած, միայն 2,2 մետր բարձրութեան, զարդարուած չորս փոքրիկ պատուհաններով. վերջանում է կոնաձև, 2,2 մետր կաթողիկէով, որ այժմ փոքր ինչ քանդուած է։

Եկեղեցու բարձրութիւնն է 11 մետր, 6,5 մետր մինչև գըմբէթը։

Եկեղեցին հանգչում է երեք առաջնաներով՝ բարձրացող հիմքի վրայ:

Դաւիթը զանուում է եկեղեցու արևմտեան պատին կից և բնուում է ոչ թէ ամբողջ, այլ միայն նրա  $\frac{2}{3}$  մասը, այն էլ աչ թէ մէջուղում է շինուած, այլ բաւական յետ, այնպէս որ հարաւային կողմից մօտ մի մետր յետ է, իսկ հիւսիսային կողմից մօտ  $\frac{1}{3}$  մետր անցկացած (տես նկ. 1 Ե.):

Սա և շինուած է ուն, որրատաշ քարով, Երկարութիւնն է 7 և լայնութեանը 8 մետր: Սա թաղակապ է եղել, որի ձեղուանի մէծագոյն մասը այժմ արդէն խնարիւում է: Այս գութի հիւսիսային կողմում մի ամբողջական և երեք կիսասների վրայ բոլորում են երեք կիսաբոլոր բաց կամարները: Սրանցից առաջինը, որ կից է եկեղեցու պատին, և որի վերայ կայ մի գեղեցիկ վարդապարզ, ճառաւում է իրեւ գուռ այն թաղակապ խորանին, որ շինուած է եկեղեցու հիւսիսային պատին կից: Դրսի կողմից: Միաս երկու կամարները բացւում են նոյնպէս թաղակապ, 4,5 մ. երկարութեան և 1,5 մետր լայնութեան շէնցի մէջ, որի արեւլեան պատում կայ մի բառանիկիւնի պարհան, իսկ արևմտեան պատում մի նեղ և երկար պատուհան:

Այս կամարների և սեան հանդէպ, հարաւային պատի վրայ, բարձրանում են նոյն ձեփ և նոյն մեծութեան որմանիւներ, որոնց վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, կազմելով 40 հարիւրամետր խորութեան խորշեր:


Գաւթի արևմտեան պատի մէջ բացւում է մի դուռն, պայտաձև կամարով պատուեած, կողքերին մի մի խաչ և բարձրում՝ մի նեղ և երկար պատուհան:

Գաւթի մէջ, եկեղեցու արևմտեան պատի երկու ներսաններում զետեղուած են մի մի կարմիր, գեղեցիկաքանչակ խաչքար, որոնցից աջակողմնանն այժմ վայր է ընկած:

Վանքը շըջապատուած է պարսպով, որ ունի երկու դուռն: Արանցից արևմտեանի վրայ շինուած է գիշերապահի մի սենեակ: Պարսպի մէջ, եկեղեցու հարաւային կողմում, կայ մի ընդարձակ նկուղից, 8 խցից և մի գոմից բաղկացած մի ամուր շինք, որ այժմ էլ կանգուան է: Այս շինութեան առջև եղել է մի աղքիւր և տւազան, սակայն այժմ աւազանը բանդուած է, իսկ աղքիւրը բղիւում է պարսպից դուրս, արևելեան զրան մօտ:

Դնդեվանքին իրը սեպէականութիւն այժմ համարւում է մի-միայն պարսպի պարփակած տեղը, ուր պարտէզ և այգի է ձըգ-ուած:

Աղմանազրութիմներ.—Եկեղեցու հարաւարեմտեան ան-  
կիւնուս, արտաքուսա (Տես նկ. 3):



## Նկար 3

Ես Սոփի տինկաց տիկին, Դիրանկին դուստր կին  
Սմապատա որդի Աշոտի Միմնեց իշխանի շինեցի զեկեղե-  
ցիս:

Սբանից բարձր՝

Մատանի էք անակն, եղեք Սիմնեաց Սոփի տիկին:  
Եկեղեցու հարաւային պատի վրայ. (Տես նկ. 4):

**82** թվականիս (= 931) ես Եղիշայ երէց և նկարիչ  
արարի առաջնորդութեամբ Սարգիս քահանայի որը կար-  
դայը Տէր ողորմէ ասացէք.

Մի իւշքարի վրայ.


Հայր Ստեփաննոս կանգնող որ նշանիս յաղօթս յի-  
շեցէք ի Քըիստոս Յիսուս, ի թվին ՆժԶ (= 967) շինե-  
ցաւ որ. Խաչս:

Մի հիւ խաչքարի վրայ.

Զհայր Սուլիքան կանգնող որ. նշանիս յաղաւթս յի-  
շեցէք ի Քըիստոս Յիսուս ՆժԶ (= 967) թվին շինեցաւ  
արան:

Եկեղեցու արեմտեան գրան ձախ կողմը (տես նկ. 5):

Կաման Ալ. ես Դրիգորէս նորողեցի զար. Վկայըս  
ի փրկութի հոգո իմոյ Առաքելն և այլ միարանքս ոահ-



## Նկար 4

Եկեղեցու արևմտեան դրան կամարի մէջ ոժբացըած և այժմ կոռուպուած ընկած խաչքարի վրայ քանդակուած է Թօփառուի, սրբութի, թուշուների և ձկների պատկերներ և ներքեւում զրուած.

**Ես** Հարտաշս կազմեցի...Մայիսասմին կողակցի. թվ. Ռժ (—1573).

Եկեղեցու արևմտեան պատի ձախակողմեան ներսանկուածում կանգնեցրած կարմրագոյն խաչքարի վրայ. (Տես նկ. 7):

**Խաչս** քարէխաւո կաեցա . . . . . իր որդոցն իւրոց. **Ես** Վարդանս կազմեցի թվ. Ջլ. (—1459).

Եկեղեցու արևմտեան ճակատին, մի խաչքարի վրայ.

**Խաչս** Սարգսի առաջնորդի եկեղեցւոյ է.

Գութի հետևային պատի սեսն վրայ.

Անվամբն Այ ես Աշոտ Բոլկայ որդի Ած ինձ ողոքմեցաւ իմ աւագ որդին ի Քս. Փոխեցաւ. ես տվի զմեծ արդի Ըստրատանին հողն յեկեղեցիս. ի տարին Բ. աւրմամ զնոր կիրակին առնեն Հասա...»


մանեցին ինձ Բ. պատ. Աւագ. Եշար. կատարիշ-քըն անին յԱյ խափանողըն դատին ի Տէ թվ. ԶԵԼ (—1309) զր. զրիշ-

## 12.

Եկեղեցու հարաւային կողմում կայ մի գերեզմանաբար հետեւեալ տապանագրով. (Նկ. 6):

Այս է հանգիստ պարոն Աւարին որ կարճաւրեալ ի + ելաւ առանդառամ պատկեր. նա էր որդի պըն. Ամիբ զուկին եւ թոռն պարոն Եահմասուրի թվ. ՌԺ (—1567) Եանդամազն, Մուրայիլն, Հարապետն հիշէր ի Քս.

1875 թուին Յովհաննէս Վարդաթիւնեանը Գլուխիվանքում գտել է որդի ձեւ ամսներ, կաթուաներ, ունելիներ, զանգակ, բուրգառ, ծննդայ և այլն, որոնք յայտնի չէ, թէ մեր հն այժմ Սրբանցից մի բանիսի վրայ եղել են հատկալ արձանագրութիւնները\*).



## Նկար 5

Ենձդայի վրայ.

Ցիշատակի է Դնդեվանայ սուրբ Նախավկայի. թվ.  
1691. (=1691).

Մի զանգակի վրայ.

ՉԵ 1. ՉԵ արկաւակ բահանայ յիշէք ի Քրիս-  
տոս, որ ստացաւ զա:

\*.) Ալիքան. Սէպական. հ. 207.

Պահած ամաններն զբայ.

Յիշատակ է Գնդեվանա Սուրբ Նախավկին.

Պահած ըսուրգառի զբայ.



Յիշատակ է Մատուրի որդի Ակոբին, որ եա ի զուռն  
Նախավկային.

## Յ Ե Խ Ը Թ - Ք Ա Բ

Տեղադրութիւն.—Ցախաց-քարի՝ բարձրանչակ և սուրբ առաքինարան վանքը գտնուում է Երդափին և Ալագեազ գիւղերի միջև բարձրացող մի երկարաձիգ լեռան հարթ գազաթին, Բաքա-դանդուրան լեռան հիւսիսային կողմը, Սմբատայ բներդից (աեւ ալլում III. 3) հիւսիս, փոքր ինչ բարձր գիւղի վրայ:



Նկար 7

Նի ասելով, 1041 թուին, Գաղիկ թ. Բագաւորութեան ժամանակ,

Ցախապարհը դէպի  
Ցախաց-քար բարձրա-  
նում է Երդափին գիւ-  
ղի միջից, և կամ Ալա-  
գեազից. Հափազանց  
դժուարելանելի է և  
նեղ:

Պատոմական տե-  
սութիւն.—Այս վանքը  
կոչւում է Ցախաց-  
քար, կամ Ցախա-քար,  
և երբեմն, մանաւոնդ  
արձանագրութիւննե-  
րի մէջ, զրուել է նաև  
Ցախաց-քար: Այժմ  
յայտնի է առաւելա-  
պէս Նոշ (Պոյզ) վանք  
անունով, որ զրուած  
է Բուրբերից, ի նկատ-  
առնելով Ժիմեանց մօտ  
կանգնած զոյդ եկեղե-  
ցիները:

Համ Ասողկի Ցա-  
խաց-քարի վանքը հիմ-  
նուած է ոի ձեռն  
հօր Ստեփանոսին Փ.  
դարի կիսին, Արտա-  
Բագրատունու թագա-  
ւորութեան մէջցին:  
Սօտ մի դար յետոյ,  
Ստեփանոս Օրբելեա-



«Հայր ռմբ վանիցն Վարդիկ շինէ պայծառ եկեղեցիս երկու ՚ի հանգստարանի տառջին սուրբ հարցն, զմին զմբէթայտրկ յանուասրբոյ Կարապետին, և զմիւն սագաշէն, հրաշտլի յօրինուածովք», որ ըստ արձանագրութեան՝ կոչուել է ս. Յովիաննէս:

Բացի այս երկու եկեղեցիներից, սրանց մատ, հազիւ հարիւր մետր հնուու, կան ուրիշ երկու եկեղեցիներ ևս, ո. Աստուածածնի և ս. Նշան, որոնց շինութեան թուականն անյայա է, միայն վերանորոգուած են 1222 թուին մի ոմ Գրիգորի ձեռքով:

Եկեղեցիների վրայ եղած արձանագրութիւններից երեսմ է, որ 1061 թուին Տարսային իշխանը նուիրել է այս վանքին Յախաց-քարի Հոգը, Գեղարքունիքում Գառնի գիւղն, և Մճուակառ-ձորում իւր ձեռատունկ այզին: Եւ այդ ժամանակին վանքի առջնորդ Տէր Գրիգորը միւս միարաններից հետ՝ այդ նուիրաբերութեան պատճառով սահմանել են տարեկան երկու պատարագ, մինը Տարսայինին, միւսը նրա երկրորդ կնոջ՝ Մինս խաթունին:

Այս նուիրաբերութեան մասին վկայում է և Լիպարիսի որդի Ստեփանոս Օրբելեանը իւր պատմութեան մէջ \*):

Տարսային իշխանն ուրիշ վանքերի հետ Յախաց-քարն էլ ժառանգութիւն է թողել իւր որդուն՝ Մինսի Ստեփանոս եպիսկոպուին:

1317 թուին Պոօշի թռու և Հասանի որդի Ետչին իւր ձեռա-տունկ այզին է նուիրել այս վանքին:

Նոյն 1317 թ. Գրամիկ անունով մինը մի ուրիշ այզի է նուիրել այս ուխտին:

1376 թ. մի ոմ Սամանի որդի իր ամուսնու հետ թաղել է այս վանքում իւր որդի Սամանին և այս սոհթով նուիրաբերութիւն արել:

1462—Յ թուին զրուած մի աւետարանի յիշտատկարանում ասուած է, զրեցաւ ընդունված ա. Աստուածածնի և սուրբ Կարապետիս, երկնանման կաթուադինէիր. իսկ սրանից 25 տարի առաջ զրուած է մի շարական Շի զաւախիս Եղեգեաց, ի վանս Յախաց-քար, ընդ հովանեաւ կենարար ս. Նշանիս... ձեռամբ Մատթէոս Քահանայի.\*\*) Գուցէ սիսալմամբ է զրուած Յախաց-քար:

Ոչինչ յայտնի չէ այս վանքերի մասին XVI դարից սկսած, սակայն ներքին վերանորոգութիւններից; ինչպէս ձեռից, նկատելի է, որ կենաքը դադարած չէ եղել Այժմ բոլորովին անինամ է թողնուած և մօտակայ Ալագեազի թուրբերը սրանց մէջ ոչիսոր են պահուած:

\*.) Ս. ՕՐԸ. գլ. 42.

\*\*) Աղեան, Մինսին. եր. 157.

Այս վանքի եկեղեցիներից նշանաւոր են ո. Յովհաննէսն և ո. Կարապետն իրենց չընադրանդասներով և ո. Աստուածածինը իւր յատակագեռվ, որ բաւական նման է ո. Հոփփոխմէի և Աղթամարի եկեղեցիներին:

Վանքի Նկարագրութիւնը.—Ցախաց-քարի վանքը բաղկացած է չորս եկեղեցիներից. սրանցից ո. Կարապետն ու ո. Յովհաննէսը կանգնած են միմեանց մօտ, իսկ ո. Աստուածածինը և ո. Նշանը սրանցից մօտ հարիւր մետր հեռու, դարձեալ միմեանց կից և առանձին պարսպով պատահ:

Ս. Կարապետ, — (Տես ալբում IV, 4) Երիտասարդ է կարճրաւոյն, որքառաշաբաթարից. երկարութիւնն է 10 մետր, լայնութիւնը 6<sup>1/2</sup>,


և բարձրութիւնը մօտ 9 մետր (ներքուստ երկ. 8,5, լայն. 5 մետր): Շարագրապետական տեսակէտից ու այս վանքի ամենացեղեցիկ շենքն է:

Ներքուստ եկեղեցին անսինն է և խայտան, Ունի մի սեղան և չորս խորան, որոնցից երկուսն արեմտեան կողմը (Տես նկ. 8 և 9): Չորս որմասուիների վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով իրենց վրայ գեղեցիկ կոթողիկէն:

Որմասիւները բաղկացած են երկու կիսաբոլոր և սրանց միջն մի քառանկիւնի կիսասիւներից, յանդաշ կիսաբոլոր և քառանկիւնի պատուանդանի վրայ և վերջացած նոյնպիսի միայն հակադիր խոյակով:

Կիսաբոլոր և կամարակառ կողաքի (abside) մէջ տեղում բացուում է մի պատուան: Սեղանի սանդուկներն ոչ թէ կողքերից, այլ մէջ աեզից են: Սեղանի ճակատը զարդարուած է չորս կամարներով, որոնցից եւրաքանչյուրի մէջ կայ մի բարձրացանդակ սափոր: Խորանների մէջ կան մի բոլորանձ սեղան, վեմքարով, և մի մի փոքրիկ պատուան: Խորանների վերև նկատելի են զաղանի պահարաններ: Եկեղեցու յատակը սալատակած է:

Արտաքրութամբ արևելիան պատան ունի երկու ներսանկուած, որոնց միջն բացուում է մի փոքրիկ պատուան, միքանի շատ գեղեցիկ շրջանակներով շրջապատուած: Խորանների տեղում բացուում են մի մի փոքրիկ պատուան, կամարակառ և վարդանման քանդակներով զարդարուած:




Հարաւային պատի մէջ (տես Ալբում III. 4) ևս կան երկու ներսանկուած, գեղեցկաքանդակ կամարով։ Սրանց միջն բացւում է մի զուռ, պարկ շրջանակով, միայն ուղղաձիգ կամարը զարդարուած է ողկոյզանման և այլ գեղեցիկ քանդակներով։

Դասն զերե բացւում է մի ոռզան երկու համակենտրոն շրջանակներով և սրանց մէջ զնդակներ։

Սրա ձախ կողմում կայ մի շատ գեղեցիկ ցածրաքանդակ, թևատարած մի արժիք՝ մազիկների մէջ մի խոյ բռնած—Մամիկոնեան իշխանների զբաշմը։ Ափսոս որ արծուի գլուխը այժմ կոտրուած է։

Նոյն սեղանի աջ կողմում եղել է մի ուրիշ ցածրաքանդակ՝ մի մարդ, որ բռնած է այս եկեղեցու կաղապարը։ Այս ցածրաքանդակն այժմ ընկած է այս պատի առջև, միայն մորոզու զըլիքի մասը կոտրուած է (տես Ալբում III. 4.)։

Արևմտեան պատի մէջ տեղում, (տես ալբում պատկեր IV. 5) բարձրից, բացւում է մի երկար պատուհան, կրկնակ շրջանակներով եղբափակուած և սվաստիկային քանդակներով գեղազարդուած։ Այժմ պատուհանի վերին, ձախ մասը քանդուած է։ Այս պատուհանից փորք




Նկար 9.

Ինչ ներքն, խորանների վրայ կան մի մի փոքրիկ պատուհան, կամարակապ, միայն ոչ մինչոյն բարձրութեան վրայ, այլ աշակողմեանը փոքր ինչ ցածր։ Վերջինիս զերե, իսկ ձախակողմեանի կողքին, կանգնած են մինչոյն բարձրութեան վերայի մի գեղեցկաքանդակ խաչքար։

Հիւսիսային պատի վրայ ներսանկուածներ չկան, և ոչ էլ-


պատուհան, միայն բարձրութ, երկու մետրաչափ միակողոք քարի վրայ քանդակուած է մի առիւծ, որ առաջի թաթերով յարձակուած է մի ցուլի վրայ:

Եկեղեցու գմբէթը զլանաձն է, կոնաձն կատարով, առանց խաչի, և զարդարուած չորս, նեղ և երկար պատուհաններով:



Նկար 10  
ուած է կարմրաւոյն, որը պատճեած է քարերից:

Ա. Յովհաննիսի եկեղեցը երկարութիւնն է 5 մետր, լայնութիւնը՝ 2½ մետր, և բարձրութիւնը՝ 4 մետր, Եկեղեցին սագացէն է, ներքուստ անսիւն և թաղակապ, Առաններ չունի, այլ միայն մի սեղան, որի երկու կողմուն բարձրանութ ճն քառանկիւնի որմասիւներ՝ կրելով մի կիսարոլոր կամար. Արտաքուստ, արենեան պատի վրայ կայ մի ոռզաս, միանգաման նման սուրբ Կարսպեսի վրայ եղածին, Միւս պատճերը միապաղաղ էն, առանց որևէ քանդակի:




Նկար 11

Երկմատեան կողմը, միակ պարզ դռան առաջ, ձգում է գաւիթը, 3 մետր երկարութեամբ և նոյն լայնութեամբ. Գաւիթը նոյնպէս

անսիւն է և ձեզունը աստղաձև քանդակներով գեղազարդուած։ Գաւիթը ևս ունի միայն մի դուռն, արևմտեան կողմում, նոյնպէս շատ պարզ։

Գաւիթի կորին կայ մի ուրիշ մատուռ, թերևս ո. Նշան առանցով, որ իսկապէս կազմում է այս շնչի առանձնայտուկ, ուշագրաւ մասը։ Այս մատրան երկարութիւնն է 2 մետր, լայնութիւնը 1½ մետր և բարձրութիւնը 3 մետր։

Ներքուատ անսիւն է, թաղակապ, ունի միայն մի կիսաբրուր սեղան, վէճ բարով։ Մի դուռքացում է հիւսիսային կողմում՝ գաւիթի կորան վրայ. մի քառանկիւնի պատուն կայ արևելեան պա-



Նկար 18.

մի մէջ և մի ոռաս՝ արևմտեան կողմը. Կորան փլուածքներից կարելի է ենթադրել, որ չորս սինէրի վըրայ բարձրանալիս է եղել մի փոքրիկ զանգակատուն։ Այս մատրան աժեհնագեղեցիկ մասը արևմտեան ճա-

կառն է (Տես Ալբու

պատկեր Վ. 6) այսուեղ կանգնած են երկու մետրաշափ կարմիր, զեղեցկաքանդակ երկու խաչքար, որոնց մէջն կայ մի երկամարտկան ներսանկուած, որի մէջ կանգնած են մի միծ և մի փոքր խաչքար։

Աստուածածնի եկեղեցին.—Ս. Կարտպետի եկեղեցոց մօտ Հարիւր մետր դէպի արևմուտք զանուում են երկու ուրիշ եկեղեցիներ, առանձին պարսպով պատած։ Այս պարսպի արևելեան մասը մեծ մասամբ դեռ ևս կանգուն է, և սրա հարաւային ծայրում բացվում է մի միծ դուռն, (Նկ. 12) որի կամարի վրայ դեռ ևս մուռմ են որբատաշ քարից շինուած մի փոքրիկ մատրան կիսաւեր պատերը։ Դուռն երկու կողմին կանգնած են մի մի եկեղեցի, այժմ կիսաւեր։

Արձանագրութիւններից երեսում է, որ այս եկեղեցիներից հիւսիսայինը (Նկ. 12 ս.) կոչուել է ո. Աստուածածնին։ Եկեղեցին ներքուատ անօիւն է, անկիւնները բոլորաձև, ինչպէս Հռիփսիմէի եկեղեցին։ Թաղակապ, մի սեղանով և չորս խորաններով, որմնեց երկուան արևմտեան կողմը։ Աջենիւն մասի խորաններից հիւսիսայինը բացվում է ուղղակի սեղանի վրայ, եկեղեցու եր-

կարութիւնն է արտաքուստ՝ 9, ներքուստ 7,60 մետր. լայնութիւնը արտաքուստ 5, ներքուստ 7,25 մետր. բարձրութիւնը - 6,5 մետր. Այս եկեղեցին հարաւային գոնով հաղորդակցում է մի մատրան հետ, որ կամարափակ սիւներով մի թաղակապ շենք է և ունի մի սեղան՝ վկա բարով։ Այսաեղ մի գեղեցկաքանզակ գերեզմանի վրայ ինդուռուած է յիշել ուղղութեան յընարեալոն և զբանի ի զօրականն զպարոն Ռւդանն (թուրին ԶՀԵ—1326).

Նոյն եկեղեցին արևմտեան գոնով էլ հաղորդակցում է մի ընդարձակ, կամարափակ գաւթի հետ, որի մէջ կան միքանի գերեզմանաքարեր և մի մեծ խաչքար։

Դարպասի հարաւային կողմի եկեղեցին (նկ. 12 Տ.) անսիւն է, թաղակապ և տունց խորանների երկ. 9,5 լայն. 4,25 մետր։

Այս եկեղեցիների շուրջը, պարսպի մէջ կան բաւականաչափ խցերի հիմնապատեր, ինչպէս նաև ձիթեհանքի երկու մեծ քար։

Արմանազութիւններ.— Ս. Կարապետի եկ. արևմտեան պատի վրայ ներքուստ։

**Թղթին Ռէթ (=1230) յիշեցէք ՚ի Քս.**

Ս. Կարապետ եկեղեցու հարաւային դրան կամարի վրայ.

Տը. Ած. ողորմնայ Գարդկայ ի քում գալստեանդ և պահեա ի շարէ։

Սրա ներքն կայ մի հղծուած արձանագրութիւն, որի շարունակութիւնը կազմում է գրան աջ կողմում ձգուող երկու տող՝

Ցաւտարաց, մասնութաժին ընդ Յուղայի եղիցի. Աստուածածին տաւնին։

Սրա ներքն.

Ողորմնայ Քս. Ած. Վարդկայ ՚ի քում գալստեանդ պարէս աւագակին ի խաչին և մաքսաւորին ի տաճարին։ Ես Վարդիկ հայր ստացայ զսր. Կարապետս. արդ որ սր. Սարգիսն աւը յայս ե. եկեղեցում ժամ Վարդկա շառնէ սր. Կարապետէս եղիցին նզովեալ իսկ առնելին աւըր- նաելը եղ. յԱյ.

Ներաք՝ հարաւային պատի վրայ.

Ի թղթին 2.. (=1251) Այս զիք ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգւոյ... Տարսայինի իշխանաց իշխանի, որդի մնելին Լիպարիտի, եղբայր Սմբատայ արքայի կողմնա- կալի այսմ նահանգի, որ իշխեցաւզ է ի Բարգուշատայ

մինչ յԴառնի սահմանը մեր Երասխայ, մեր յոյս Քրիստոս  
է... զհոգւց մերոց տուաք ի սուրբ Ուխտս զՅախաքարի  
հողն ի հայրենեաց մերոց, ի Գեղարքունի զգեղն Գառնի  
և ի Մճռակաձոր զմեր ձեռատունկ այգին Ա...ութիից.  
Սպասաւորը Տէր Գրիգոր և այլ միաբանք սահմանեցին  
Զատկի սուրբ տաւնին, առաքելոց Պետրոսի և Պաւղոսի  
եկեղեցիս ամենայն պատարազն Ա. աւուր ինձ առնեն  
Տարսայինիս, Ա. աւըն ամուսնոյ իմոյ Մինա խաթունին.  
Արդ թէ ի մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց հակա-  
ռակի Յժմ հայրապետացն նղոված եղ...

Ս. Կարապետի գաւթի հարաւային պատի վրայ.

Յանուն Ա. և Մարտիրոս զիմ հայրենի հողն զՓո-  
րադափնին, զԿայումնուանէ ի Յաղացքարի սուրբ Յով-  
հաննէս տուի, իմ հայրենեաց անդարձ էր որ իմ մահուն  
յետու Յաղացքարէն որու ոչ ում հետ ոչինչ հաշիւ (շկայ)...  
Որ զիմ անգարձն յետ դարձուցանէ Յժմ հայրապետացն  
նղոված եղեցի.

Ս. Յովհաննէս եկեղեցու գաւթի դրան վերն.

Ես հայր Վարդիկ առաջնօրդ սուրբ Ուխտիս Յախաց-  
քարիս շինեցի զսուրբ կաթուղիկէս և կանգնեցի զնշան  
սուրբ Երրորդութեան վասն իմ հոգւոյս Փրկութեան, թի-  
րես ողորմութիւն գտից ի յապակային, ի տիեզերական  
հրապարակին, ուր բանքն սպառին եւ գործքն թագաւո-  
րեն. Արդ ով սրբագարդ քահանայը, որը զսուրբ պատա-  
րազն համարձակ մատուցանէր, զիս յաղաւթս յիշեցէր  
առաջի զինլոյն Քրիստոսի. ամեն շարաթ աւը զայն ինձ  
առնէ այն քահանայն որ ի սմա պատարագ մատուցանէ.

Ս. Յովհաննէս եկեղեցու արևմտեան դրան վերն, որ բաց-  
ւում է գաւթի մէջ.

Թուին Շժ (=1061) կամ եղն ինձ հայր Վարդկայ  
եւ ամենայն եղբարց զըել զյիշատակ վասն Վարդայ՝ Զա-  
րարէի որդույ, որ մեծ յուսով երետ զԲվեայ մարդ և Մի-  
դայի այգին և այլ շատ իրք, եւ մեր գըեցաք որշափ ի  
հաստատութեան է եկեղեցիս զՎարդավառին շաբաթն

ԺԵ ԺԱՄ, որ խափանէ ՅԺԲ հայրապետացն նզոված է և  
մեր մեղացն տէր է.

Ս. Աստուածածնի եկեղեցու դրան վրայ.

Ես Գրիգոր, որդի Մըբատայ Աստինի տէր, երկու նիս  
տնկիցի, երկու ի ո. Յովհաննէս, Գրեցաւ ի տարին ԺԲ  
աւր ժամ պատարագ. Որ զրայս հակառակի ՅԺԲ հայրա-  
պետացն նզովեալ եղիցի.

Սուրբ Աստուածածնի եկեղեցու պարօպի դռան վերայ.

Թվին ՈչԱ (—1222). Նորոգեցաւ Սր Աստուածա-  
ծինս ի ձեռն Գրիգորո եւ եղարքոս զրեցին իւր տաւնին  
Ա. ժամ: Կատարիշը աւրհնին յԱյ:

Ս. Աստուածածնի եկեղեցու պարօպի մուշքի հիւսային  
պատի վրայ.

Կամաւն Այ ես Էաչի որդի Հասանա, թոռն Պատ-  
շայ միաբանեցայ սր. Ուխտիս ծաղացքարու և ետու յիմ  
հայրեննեաց ի Արկղունս զմեր ձեռատունկ այգին նորա-  
կերտ իւր ջրովն. մեր եղարյըն Տէր Աւքակի Ովանէս և  
միաբանըն ի տարին սահմանեցին Դ. պատարագ մեզ եւ  
ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ Մամախաթունին ի  
տաւնի Դաւթի և Ցակորայ, Կատարիշը աւրհնին յԱյ. ի  
թվին 242 (—1317).

Այս արձանագրութեան աջ կողմը.

Կամաւն Այ. յիշխանութեան Խւանէի ի հայրա-  
պետութեան Տեառն ներսիսի... որդի Մամփսոնայ եւ  
ամուսին իմ Արուզ խաթունս թաղեցաք մօր Մամփսոն  
որդիս ի վանքս. մեր էլ գերեզմանա... մատաղ արա-  
րաք եւ... հրեշտակաբնակ սր. Ուխտի ծաղացքարի...  
ծախեցին ամենայն հարկէ ազատ Սիրկնայ այգին...  
Բուրզա թուրբի... զերի թափեցին... այգի... չորեքս.  
Ա. իմ հոգւոյս. Ա. ամուսնոյ խաթունի հոգւոյն. Ա.  
Մամփսոնայ հոգւոյն տուաք 'ի սր. Ցովանէս վասն  
ծովացեալ մեղաց մերոց. Սպասաւորը ներսէս եւ այլ միա-  
բանըս տարին վեց պատարագ տուին մեզ. ծնողաց մե-  
րոց. ով հակառակի զատի յԱյ. մասն ու բաժին Յուղա-  
յին եւ այլ խաչանանուացն առցէ. Թվ. ՊժԶ (—1367).

Պարսպի դռան հորաւային պատի վրայ.

Ի թվին 242 (=1317). Կաման Այ ես Դրամիկ միաբանեցա սր ուխտիս ծաղացքարո եւ ետու ի հալալ ընչից իմոց... նոյն յայզոյն....

### ՆՈՐԱՎԱՐՈՒԹ

Ցեղաղորութիւն. — Նորավանքը գտնուում է Ամառու գիւղից գէտի արևելանարաւ, հաղիւ երկու կիլոմետր հեռու, մի նեղ ձորակում (տես Ալբում պատկեր ՎI, 7), որի միջից հոսում է մի փոքրիկ գետակ՝ սկիզբն առնելով Կոմիշիկի և Փայաղարա-ձորի աղբիւրներից: Զօրի երկու կողմը պատած են անազին, կարմիր ժայռեր, որոնք միանգամայն անմատչելի են դարձնում ձորը: Լերկ ժայռերին իրո հակադրութիւն ամբողջ ձորակը ծածկուած է ճոխ բուսականութեամբ, մանւանդ ուսենիներով և պտղատու ծառերով:

Գետակի աջ կողմը, բաւական քարձոր, փոքրիկ հարթութեան վրայ կանգնած են Նորավանքի եկեղեցիները՝ պաշտպանուած մի քառանկիւնի հաստ և բարձր պարսպով, որի երկարութիւնը հասնում է 110 և լայնութիւնը 65 մետրի: ունի երկու գարզաս, մինչ հիւսիսային, միւն արևելեան պատի մէջ:

Այս պարսպապատ տարածութեան մէջ կանգնած են երեք եկեղեցիներ, որոնցից երկուուր կից են միմեանց, իսկ մինը 5 մետր հեռու որանցից երկու կից եկեղեցիներից հարաւայինը (նկ. 13. Ը), այս որ իր առջևում ունի մի ընդարձակ ժամատուն (նոյն նկ. Ա), կոչւում է Նախավկայ կամ սուրբ Կարապետ, իսկ մինը՝ սուրբ Գրիգոր (նոյն նկար 6): Ս. Կարապետից արեւաբանարաւ, առանձին կանգնած երկյարկանի եկեղեցու անունը որոշ յայտնի չէ, սակայն շատ հաւանական է, որ սուրբ Ասուածածին լինի: Այս եկեղեցու առջևում նկատելի են խցերի հետքեր և մի մեծ ցործի հոր:

Պարսպից գուրս կան կիսաւեր մի փոքրիկ մատու՛ որ չիւրատուն է կոչւում, մի քանի խուց և աների հետքեր:

Վանքից դէպի արևելանարաւ, ժառերի մէջ կանգնած է հասարակ քարից շինուած մի մատուռ, որի մէջ կայ մի աղբիւրը բաւական մեծ աւազանով: Այս աւազանն այժմ էլ սուրբ է համարում և շատ հիւսնդներ՝ նոյն իսկ մահմետական՝ գալիս են սրանից բժշկութիւն հայցելու: Թէև ոչ մի արձանագրութիւն չկայ սրա վրայ, և մատուռի շինքն էլ շատ հին չէ, սակայն շատ հաւանական է, որ սուրբ Փոկասի մատուռը լինի:

Նորավանք գալու համար պէտք է նախ գոլ Արփա զիւղը, որ խճուղիով միացած է թէ Բաշ-Նորաշէնի երկաթուղու կայարանին և թէ Նոր-Բայազէս քաղաքին, թէն դեռ ևս փոստային հաղորդակցութիւն չէ հաստատուած:

Արփայից մի նեղ կածան հազար ու մէկ պայմաններ անելով և սոսկայի նեղութիւններ պատճառելով բարձրանում է մինչև Ամաղու թրքարնակ գիւղը, որտեղից նոյն ձևով իշխում վանքը: Միայն անդական ջորին և ձին կարող են անցնել այս կածանով:

Պատուական տեսութիւն.—Նորավանքը ոչ միայն չափազանց նշանաւոր է ճարտարապետական տեսակէտից, այլ և պատճառական տես դիր է կտառարկել, լինելով Սիւնեաց եպիսկոպոսութեան աթոռ և Օրբելեան իշխանների հանգստարան:

Այս գզերահաշակ և փառաւոր տիստի, աշխարհազէտ խմբանիք<sup>\*)</sup> մասին ես պատճական տեղեկութիւնները շատ կցկրտուր են. միակ, հաւասարի աղքիւրն Ստեփանոս Օրբելեանն է, և նա էլ նրա հիմնարկութեան ժամանակի վերաբերմամբ շատ անորոշ ձևով է խօսում. «Յառաջ քան զայս բազում ժամանակօք, վաղ աւուրբթ և հազոյն ամօք մի նեղ և անձուկ ձորակի մէջ, կրտշաղ քարով շինուած էր Ս. Կարապետի անունով մի եկեղեցի, ոյոյժ սքանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն»:

Սրա մօտից բղխում էր մի քաղցրահամ աղքիւր, և ամբողջ ձորը զարդարուած էր այզիններով և պաղատու ծառերով: «Նաև՝ ի թանձրամած կաշեառուաթիւնն, նոյն ձորում, կար մի եկեղեցի ո. Փոկաս հայրապետի անունով շինուած, և եկեղեցու մէջ, բեմի տակ, բղխում էր չշուր սակաւ և ընդ ջրոյն ելանէր և ձեթ բըցըշէկարք, զորմէ լուաք՝ ի հանգոյն աւանդութեանց, ատում է Օրբելեան, եթէ բերեալ եզն ի նշանարաց սրբոյ հայրապետին Փոկասու և անդ հանգուցեալը, որի անունով և տեղը ո. Փոկաս է կոչուել և անէք հրաշս զարմանալիս, զի ամենայն անբուժելի ցաւք և անհնարինք ի մարդկանէ՝ զնդութիւնը և բորսութիւնը և վէրբ բազմաժամանակայ նեխեալք և ապականեալք; ի ժամանելին ի տեղին յայն հաւատովք, և ի լուանալ ի ջուրն և յօթանելն ձիթով, բժշկեալ լինէին. և եթէ մահացու լինէր՝ առժամայն վախճանէրու: Եւ սրա համար նրա հոչակը մեծապէս տարածուած էր չընդ ամենայն աշխարհու:

Քանի որ այս ուխտը հոչակ է ստացել իւր բժշկարար ջրի չնորհիւ, և քանի որ ջրի պաշտամունքը բնապաշտութեան մետ-

<sup>\*)</sup> Օրբելեան. գլ. 47.

ցորդ է, հետեապէս և կարելի է ննթադրել, որ այս տեղը նոյնիսկ հեթանոսութեան միջոցին որոշ սրբավայր է եղել, և մինչև ժԲ. դարը գլխաւորապէս հիւանդ մարդկանց ուխտառեղի:

ԺԲ. դարի սկզբում, երբ թուրքերն աւերեցին Սիւնեաց աշխարհը, սպանեցին Սիւնեգարիմ թագուորին ու վերացրին Բաղաց թագաւորութիւնը՝ այնպէս որ Հրուցին ամենայն ուխտք վանորէցն ի՞ պաշտամանէ՝ Յովիանն վանքից Բաղաց իշխանութեան առնմից Համտունեան Համանի որդի Յովիաննէս եպիսկոպոսը, որը ուներ ընդ ձեռամք զամնայն ազատս թագաւորութեան այնմ, այս ու այն կողմ երկար թափառելուց յիշոյ, 1105 թուին եկել է Վայոց-ձոր գաւառը և կամեցել բնակիլ ո՛ի խորածոր անապատին Նորավանից՝ մերձ անտոիկ դղեկին Հրասկարեցքն, առ հիւզօր և մեծասրանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին։ Սրա մօտ եկել է սրա եղբայր Համտուն իշխանը և այսուհե կրօնաւոր դարձել:

Երկու եղբայրներն իրենց շուրջը հաւաքելով կրօնաւորներ և ճգնապահցիկ մարդեկի, հնացարել են այստեղից աշխարհական մարդկանց, աւերունի նշաններ կանգնեցրել վանքի շուրջը, որպէսզի կանայք և լիոնի մարդեկ չանցնին, առա սահմանակից գանձակցի և տիսարքեցի գիւղացիներից հողեր հն գնել և հետզհետէ սկսել են կազմակերպուիւ:

Տեղի ընտրութիւնն այդ խանակի, անվերջ ասպատակութիւնների միջոցի համար, շատ յաջող է եղել, որովհետև Ամազու ձորն ահապին, անանցանելի ժայռերով պատաժ լինելով՝ անմաշելի էր, միայն հարկաւոր էր սրա մօտ բարձրացող Հրասեկայ բերդը ձեռք ձգել, որին արդէն տիրացել էր մի պարսիկ իշխան, որը նոյնպէս աշխատում էր որսալ և սպանել Յովիաննէս եպիսկոպոսին և աւերել վանքը։ Մոկայն վերջինս, հմուտ լինելով պարսից լեզուին, պարսկական շորեր հագնելով զնացել է Սպահան, ուր բժշկելով շահի մահմամերձ որդուն՝ ստացել Հրասեկայ և Անապատի (այժմեան Այարի) բերդերը և 12 ազարակ, եկս դար շարունակ առաջնորդութիւն անելուց յետ Յովիաննէս եպիսկոպոսը 1154 թուին վախճանուել է և թաղուել նոյն վանքի մէջ և ոգորութիւնց մեծամեծե ելանն ի զերեզմանէ նորաւու Նրա մատ թաղուել է նրա եղբայր Համտուն իշխանը, որ վախճանուել է 3 տարի յիշոյ (1157 թ.).

ԺԳ. դարի երրորդ քառորդին Մեղրեցի Դրիգոր եպիսկոպոսի որդի Մաեփաննոս շշնորհապարք եղիսկոպոսը, որ Աթարէկից Փախը մահ (քրիստոնասէք) էր կոչուել՝ եկել հաստատուել է այս վանքի մէջ, ուր թաղուել էր և իւր հայրը 1168 թուին Ստ այս-

տեղ հաստատել է թեմական աթոռ՝ Սիբանեաց աւելըւած աթոռի փոխարէն, Հաստատութիւն սասանալով Ծնորհալու հղբայր Դրիգորիս կաթուղիկոսից և Ելտկուղ առվթանից, որից և նուէր է ստացել Ազարակի ձորը և անապատի բերդը, միանգամայն աշխարհական հարկից ազատելով վանքերն ու վանական կալուածները, Ստեֆանոս եպիսկոպոսը վահճանուել է Արքա գիւղում 1216 թուին և մարմինը բերուել Նորավանից Սրբ քեռորդին, Տէ՛ր Սարգիս եպիսկոպոսը, որ գեռ Ստեփանոս եպիսկոպոսից ձեռնազրուած է եղել իր Նրա յաջորդ՝ պիտի և Տաթեկ վանքի նոր առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսին այս վիճակները, որ Ստեփանոս եպիսկոպոսը, օգտուելով Սիհենաց աշխարհի աւերածից, Հաստատել էր Նորավանը վրայու Վերջինիս Թուցել է միայն Վայոց-Ճորը, Ճառուկը և Ներիշինանը, Արք Կոստանդին կաթուացիկոսի մօտ զնալով, Նրանից յրջաբերական թուղթ է առել, որ այլևս ոչ ոք չկարողանայ խել գոռնէ այդ երեք զաւաները, Տարթիկ և Նորավանը եպիսկոպոտական աթոռներն որպէս միմեանցից անկախ յառաջ են զնացել, մինչև որ Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեանը կարողացել է նորից միացնել:

Ստեփան Սարգիս եպիսկոպոսի ամենանշանաւոր գործն այս է եղել, որ Վայոց-Ճորի իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելեանի հետ 1216 թուին սկսել է շինել զգեղեցկայարմար եկեղեցին ի Նորավանաց և 1221 թուին աւարանով, մեծ հանգիստ օժեկ է տուել, Ներկայ եղող բազմաթիւ նշանաւոր անձերից Բուլպակ իշխանը, Լիպարիտ Օրբելեանի անձերը, Նուիրել է այս անորակիրտ քաւարանին Ազգերիս ագորակը, իւր սահմաներով:

Այս միջացներին վանքից յափշտակուած Ազարակի-Ճոր գիւղը Զաքարէ սպասաւարը Լիպարիտ իշխանի խնդրով վերադրերէ է Նորավանքին Այս ըստակապաշտու Լիպարիտ իշխանը ևս թաղուել է այս վանքում, բերուելով Կողաշի վանքից:

Ստեփանոս եպիսկոպոսի ամանակ Լիպարիտ իշխանի որդի Մարտաց, որ և Թագավաւորը, Տարբայյա է կոչուել, 1261 թուին շշնէ ժամանուն մի հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի աղօթարանի, ի գրան ս. Նախավկային, ի տաշածոյ վիճանց և ի կոփածոյ քարտոն, և... աննման զարդուա զարդարէ զնկեղեցին մեծածախ գանձուը յուկոյ և յարծաթոյ և ի պատուական մետաքսէից»։

Ստեփանոս եպիսկոպոսին յաջորդել է Նրա ազգական Վայուամ ճզնաւորի որդի Սարգիս եպիսկոպոսը, Սրբ ժամանակ Մըրմարտ իշխանը նուիրել է Նորավանքին Աւելց, Անապատ և Ազատ գիւղերը և այգիներ Ակոռի, Արքա, Ամազու, Հողոմոց, Սաղկա-Ճոր և Չոււ գիւղերում,

Այս Սարդիս եպիսկոպոսը Տարսային իշխանի հրամանով շինել է Արքա գիւղի մօտ՝ Արքաշայի վրայ՝ մի նշանաւոր կուռք, որի հետեւ են նաև այժմ:

1273 թուին Սմբատ իշխանը Դավրիժում մեսել է և նրա մարմինը մեծ հանդէսով բերել են և՛ հայրենի դամբարանն սուրբ ուխտին նորավանից... ուր շինէ եղբայր իւր Տարսայիմն նմա Ծով տապանի և եկեղեցի յանուն որբոյն Դրիզորի և անդ փոխէ շի հանգիստ զեղբայր իւր Սմբատ։ Այս շինութեան վերահսկողութիւնը Տարսային յանձնել է Սիրանէս անունով մի վարդապետի, և յօդուա այդ եկեղեցու յատկացրել է Հալիճոր գիւղից վաթուն սպիտակ հարկ։ \*)

Սարգիս եպիսկոպոսին յաջորդել է նրա քեռորդի Ստեփանոս եպիսկոպոսը։ Սա գիմել է Կոստանդին կաթողիկոսին և նրա շրջարարական թղթով նորից հաստատել նորավանքի վրայ Վայոցձորի, Ճանուկի և Նախիջևանի գաւառները։

1287 թուին Տարսային որդի Ստեփանոսը Սիրնեաց մետրոպոլիտ է հենազարուել, և միապետել նորավանքի և Տաթեի աթոռները։ Սարգիս եպիսկոպոսը նորավանքում խոնարհութեամբ հնագանդուել է նրան և մեացել որպէս վանքի առաջնորդ մինչև 1298 թուականը, երբ մեսել է և թաղումը նորավանքի ժամանել Հաւանօրէն այս Սարգիս եպիսկոպոսն է շինել Հիւրատուն կոչուած փոքրիկ մատուռը՝ Տարսային իշխանի հրամանով։

1339 թուին Բուրթել իշխանը շինել է Աստուածածնի հրաշակերտ երկյարկանի եկեղեցին։

Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեան պատմաբանը, որ Նորավանքի եօթներորդ առաջնորդն է եղած, և նոյն վանքի ժամանան մէջ Թաղուած 1304 թուին, նուիրել է վանքին Արասաշէն և Ս. Սաւակ Փողանքի մէջ, իւր հայրենաբաժինն Հրասնեկայ բերդը, Արատես գիւղը, Չուա գիւղը և այլն։

Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեանին յաջորդել է Յովհաննէս եպիսկոպոսը, որը նոյնպէս թաղուած է ժամանան մէջ և որի շիրմէ վրայ արձանագրուած է Հնաշակաւոր մետրապոլիտ Սիրնեաց։

Այնուհետև անդեկութիւններ պահասում են մինչև ժԶ դարը։ 1569 թուին մի ոմն Եղիշայ եպիսկոպոս մի խաչ քար է կանգնել իւր հարեզքօր Առաջել եպիսկոպոսի հոգւոյ փրկութեան համար։

Ս. Կարապետի գաւթի տապանաքարերից մինը 1571 թուից պատկանում է Առաջել եպիսկոպոսին։

\*) Արժանագրութիւն նոյն եկեղեցու հիւրեային դամբ։

1813 թուին պարսից Ֆաթալիի շահը մի հրովարտակով և Ամաղուի Կարմիր զանքի իրաւունքը սեփականացրել է Մելիք Սանրէգի որդի Պետրոս-բէք Օրբելիանին... և այս նրա համար, որ նա (իւր երկու եղբայրների հետ) յիշեալ գիւղի բոլոր եկամուտը դարձնելով վանքի օգտին, կարողանան խաղաղութեամբ աղօթել պետութեան մշանչնեական յարտաեռթեան համար \*).

1850-ական թուականներին այս մենաստանը ոչխարանց է դարձել 1872-ին Ռ. Մինողը տեսուչ է նյանակել վանքի վրայ Արքա զիւղի ձխատեր քահանայ Տէր Մկրտիչ Տէր Մկրտչեանցին, սակայն վերջինիս մահից յետոյ կրկին անտէր անտիրական է թողնուել մինչև այժմ: Սրա շրջակայ հողերն այժմ պատկանում են Երևանցի Եղիշաբեհաններին:

Վանքի նկարագրութիւնը.—Ս. Կարապետի եկեղեցին.—Լեպարիս Օրբելիանի և Սարգիս եպիսկոպոսի 1221 թուին կառուցած այս եկեղեցին (նկ. 13. Ը) շինուած է տաշած, կարմրաւոյն քարից: Սրա երկարութեանն է՝ արտաքուստ 12,15, ներքուստ՝ 9,45 մ. լայնութիւնը՝ արտաքուստ 9,50, իսկ ներքուստ՝ 8 մետր, իսկ բարձրութիւնը՝ մինչև զմբէթը՝ մատ 9 մետր:

Եկեղեցին ներքուստ (նկ. 14) անսիւն է, մի սեղանով (անս Ալբում պատկեր V. 8) և չորս երկյարկ խորաններով (անս Ալբում V. 9): Չորս որմասինների վրայ բոլորում են կիսարողոր կամարներ, կրկելով մի մանեսկ, որի վրայ երբեմն բարձրացել է ութանկիւնի, մատ 3,5 մետր արտաքիծ ունեցող զմբէթը:


Որմասիններից սեղանի երկու կողքերին գտնուողները բաղկացած են մի մի, իսկ միաներն երկական կիսարողոր կիսաներից: Խոյակները կիսարողոր և քառանկիւնի են, իսկ խարիսխները՝ մինինը՝ նախ կիսարողոր և ապա ութանկիւնի, իսկ միւններինը՝ քառանկիւնի, վերան բազմանկիւնի՝ վերին եղբերը եռանկիւնածև կարուած:

Սեղանի երկու կողմի որմասինների խոյակները մինուն բարձրութեամբ բոլորում են սեղանի շուրջը:

Սեղանը կիսարողոր է, 3½ մ. լայնութեան և 3,15 երկարութեան, նոյնպիսի կողակով, և երկկամար, որոնք միմեանցից հեռու են 53 սանտիմետր տարածութեամբ: Այս տարածութեան մէջ բացում են մի մի գուռն, որ չորս ոտ սանդուղներով բարձրանում են երկրորդ յարկի աւանդատան մէջ:

Կողակի մէջ, միմեանց հանգէտ կան երկու պատուհան, մի առաջական բարձրականութիւնը աղուած է թաղբերութեամբ: Անհաղութական նկատման բիւնցիք մէջ: Արքաս 1890 թ. եր. 602:


մետր բարձրութեամբ և սեղանի երկու կողքերին կան հնդական առարինանի քարէ սանդուխտներ։ Սեղանի ճակատը շը ջանակով եզրափակուած է և երեք շարք փոքրիկ խաչերով զարդարուած։ Բոլոր աւանդատներն ել գրեթէ միաշափ են, 2,30 մետր երկարութեան, 1,15 մետր լայնութեան և 2,60 մետր բարձրու-



Նկար 13

Թեան։ Բոլորի մէջն էլ կան մի մի կիսաքրոզը սեղան, մի մի փոքրիկ, նեղ և երկար պատուհանով արևելեան կողմի պատի մէջ, անպէս որ արևմտեան կողմի աւանդատների պատուհանները բացւում են հկեղեցու մէջ։

Երկրորդ յարկի աւանդատաների դաներն այսպէս են.—Սեղանի երկու կողքին գտնուազներին, ինչպէս առացինք, բացւում են սեղանի վրայից, կողակի մէջ, երկու կամարների միջև, իսկ արևմտեան կողմը գտնուազներինը՝ ներքին յարկի աւանդատան գուան վերև, դէպի որը բարձրանում է 7 աստիճանից բազկացած մի քարէ անդուխտ: (Տես Ալբու, պատկեր VII. 9):



Եկեղեցու հիւսիսային պատի մէջ բացւում է մի խորշ (պտրհան) 1,50 մետր բարձրութեան, 85 սանտիմետր լայնութեան և 60 սանտիմետր խորութեան, որ գուցէ մի ժամանակ պատունան եղած լինի:

Եկեղեցին ունի միայն մի դուռն արևմտան կողմում, որ 5

աստիճան ամանգուղով իշխում է գաւթի մէջ (ահս Ալբում, պատկեր Վ. 10), Արքեմ եկեղեցու յատակը մօտաւորապէս 1<sup>1/4</sup> մետրաչափ բարձր է զաւթի յատակից, հետևապէս և կարելի է ենթադրել, որ այսակ մի ներքնայրել, գուցէ զաղանի պահաքն կայ: Այս գուղը բաւական լայն է, 1,30 մետր, և 1,90 մետր էլ բարձրութիւն ունի. եզրափակուած է կիսարողոր սիւներով և կիսարողոր կամսրով:

Եկեղեցու արևելիան պատի մէջ, արտաքուստ, կան երկու ներսանկուածներ, որոնց մէջ կան կիսարողը քանդակով եզրափակուած ներսանկուած: Այս երկու ներսանկուածների միջև բացուում է մի երկար և նեղ, 1 մետր բարձրութեան և 25 հարիւրամետր լայնութեան մի պատռահան, չորս կողմից երկու կիսարողոր և երկու քառանկիւնի երիզաւոր շրջանակով պատռած:

Աւանդասաների տեղերուում կան մի մի, փոքր և նեղ, 27 հարիւրամետր բարձրութեան և 12 հարիւրամետր լայնութեան պատռահան, փոքրիկ կամտարով պատռած:

Հարաւային պատի բարձրուում կայ մի ոռզաս, շրջանակով պատռած: Սրանից ներքեւ ամբողջ պատը բանուած է մի աւեր և հողով լցուած եկեղեցու պատռով:

Արեմանեան պատը զանուում է գաւթի մէջ և զրեթէ ամբողջովին պատռած է խաչքարերով: Բաւական բարձր, գաւթի ձեղունեց վերն կայ մի երկար և նեղ պատռուան, որի կողքերին և վերնում կան մի կամտարակապ, գեղեցիկ խաչքար:

Հիւսիսային պատը նոյնպէս պատռած է Ս. Գրիգորի եկեղեցու պատռով: Ներքուստ երկուում է, որ այս պատի մէջ եղել է մի ոռզաս:

Ս. Կարապետի գալիթ-դամբարանը.— (Շինուած 1261թ.) Ս. Կարապետի արեմանեան պատին կից կառուցուած է մի մեծ զաւթիթ, (նկ. 13 Ա.) որ իր դամբարան է ծառայել Օրբելիան տոհմին: Շինուած է կարմրաւոյն, սրբատաշ քարով, 8,30 մետր երկարութեան, և 9,85 մետր լայնութեան, այնպէս որ ս. Կարապետ եկեղեցուց 2,85 մետր լայն է Բարձրութիւնն ուզիղ 9 մետր է: Գաւթիթը ներքուստ (նկ. 14) անսիւն է, միայն 12 որմասիւն ունի, որոնցից երկուսը, որ արենելեան պատին կից են, հնդանկիւնի են, իսկ մեցածը՝ կիսարողոր: Անկիւնների չորս որմասիւնները համեմատաբար փոքր են: Խարիսխներին որմասիւնների ձեմք համեմատ են, հնդանկիւններին՝ հնդանկիւնի, իսկ կիսարութիւնները՝ կիսարողոր են, բոլորն էլ քառանկիւնի պատռուանդանի վրայ յանկած: Խոյակ միայն երկուսը՝ արեմանեան կողմիւններն ունին, բանդակիւններով պարդարուած:

Արևելեան կողմից որմասիների վրայ, պատին կից, բոլորում են երեք կամարուոր կամարներ, որոնցից միջինն ընզըբը կում է զուար, իսկ կողքի երկուսի մէջ կանգնեցրած են գեղեցիկ, մեծ խաչքարեր՝ պատուանգանի վրայ ամրացրած, ոչ կոդմում երկու, ձախում՝ երեք հատ Արմասիներից բարձր, այս երեք կամարների մէջ էլ կան երկու գեղեցիկ, փաքըրիկ խաչքար:

Մի գեղեցիկ խաչքար էլ ընկած է յատակին և վերին մասը կոտրուած (նկ. 15):

Միւս որմասիների վրայ 2,65 մետր բարձրութեամբ ձըգւում է 40 հարիւրամետր լայնութեան և 25 հարիւրամետր հաստութեան մի կարնիզ, որի վրայ, իւրաքանչիւր պատի մէջ բացւում են մի մի պատուհան, կողքերին մի մի խորշ՝ Պատուհանները մի մի սիւնեակով բաժանւում են երկու, կամարակապ մասին իւրաքանչիւր խորշի մէջ, պատուանգանի վրայ կանգնեցրած է մի մի գեղեցիկանգակ խաչ-

Նկար 15

Քար (առև Ալբում պատկեր VII 11):

Չեղունը բրդաձն բարձրանալով վերջանում է մի 1,70 մետր երկարութեան և մէկ մետրից աւելի հաստութեան քառասկիւնի, երկու կտորից բաղկացած բարով, որի մէջ հնազնեաէ սեղանագիզ, զանազան բանդակներով զարդարուած բացւում է հերթիկը:

Այս ձեղունի վրայ, արևելեան կողմը ամրացրուած են երկու խաչքար. իսկ հիւսիսային կողմը, ոռաջին խորշից բարձր քանդակուած է մի ձիւուր, որ սուրբ ձեռին կռւում է իր առաջառ ելած վագրի համ (առև Ալբում VII 11):



Այս գաւիթն ունի երկու զուռն, (երկուան էլ  $1,80 \times 140$  մ. մեծութեան) մինց հարաւ-արենեան անկիանում, որ այժմ կիսով չափ ծածկուած է, միւսը արևմտեան կողմբ։ Այս վերջինս մի քանի կիսաարիաներով եղարափակուած է և կիսաարոր երեք կամարով պատկուած։ Կամարակալ քորի վրայ ունի մի գեղեցիկ ցածրացանգակ, որ ներկայացնուում է Աստուածածինը՝ նստած, գրկում Յիսուսը։ Նկատելի են նաև ծաղիկների մէջ երկու, զույգ մոգերի անդրիներ։ Մի ցածրացանգակ էլ սրանից բարձր կայ, կրկնակ պատուանի կամարին, որ ներկայացնուում է Հայր Աստծուն, աջ ձեռը վերև պարզած իրան թէ օրնուում է, իսկ ձախ ձեռը զրուած է կրծքին և բոլ մէջ ունի մի թագակիր զլուխն Հայր Աստծու զլուխ վերև քանդակուած է Սուրբ Հոգին աղաւանակերպ։ Աջ կողմում գտնուում է Յիսուսը՝ խաչուած, ներցեսում երկու հրեշտակ։

Աւշագրաւում է նաև այս գրան հիւսիսային կողմում կանգնած գեղեցկաքանդակ խաչբարը, որի գագաթին քանդակուած է Յիսուս՝ զանի վրայ բազմած, ձախ ձեռին Աւետարանը։ Յիսուսի երկու հոգեբերին կան մի մի առաքեալը (Տես Ալբու V 12 և IX 13):

Ժամատան յատակը ծածկուած է երեք շարք գեղեցիկ, մեծ տապանաքարերով, որոնց թիւը հասնում է 23-ի։ Սրանց տապանագըները զետեղելով արձանագրութեան բաժնում, այստեղ յիշում ենք նշանաւոր ննջեցնեալների անունները։

Իշխանաց իշխան Այլիքում, որ վախճանուել է 1253—5 թ.։

Ասկա տիկին, Լիպարիտի կինը, Բուրաք իշխանի զուօտը, Տարսույին իշխանի մայրը, որ վախճանուել է 1263 թ.

Փախրագուլայն, Լիպարիտի և Ասկայի որդին, Տարսոյինի և Սմբատի եղբայրը, վախճանուել է 1260 թ.

Իվանէ, Լիպարիտի որդին, որ վախճանուել է 1260 թ.

Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, որ վախճանուել է 1260 թուին։

Յովհաննէս մետրապոլիտ Սիւնեաց, վախճանուել է 1274 թ.

Սուրբիս Սիւնեաց եպիսկոպոս և անյաղթ հանոր, վախճանուել է 1298 թ.

Ստեփաննոս Սիւնեաց մետրապոլիտ, վախճանուել է 1304 թ.

Տէր Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս, որ վախճանուել է 1305 թ.

Առաքել եպիսկոպոս, որ վախճանուել է 1571 թ.

Տէր Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս, որի մասին ոչինչ յայտնի չէ։

*Ս. Գրիգոր.* — (Ծինուել է 1273 թ.) Ս. Կարապետ եկեղեցու հիւսիսային պատին կից կառուցուած է Ս. Գրիգորի եկեղեցին, (նկ. 13, Ե.) նոյնպիսի սրբատաշ, կարմրաւոյն քարով, ներքուստ 8<sup>1/2</sup> մետր երկարութեան, 5 մետր լայնութեան և մաս 7 մետր բարձութեան:

Եկեղեցին ներքուստ անսին է, թաղակապ և անզմբէթ, Հարաւային պատի մէջտեղում մի որմասին է բարձրանում, որից երկու կիսարուր կամարներ են ձգւում աջ և ձախ, պատին կից, որոնցը, սահայն, հանդշում են ոչ թէ որմասիների, ոյլ միայն խոյակների վրայ, որ ցցւուած են պատի ծայրերում: Այսպիսի երկու կամարներ էլ հիւսիսային պատի վրայ են բոլորում, յանկերով միմայն երեք խոյակների վրայ, առանց որմասիների:

Եկեղեցու կողակը բոլորում է և թաղակապ, առանձին կամորով: Սեղանը բաւական ցածր է, 90 հարիւրամետր և երկու կողմից չորսական աստիճանով սանդուղներ ունի: Սեղանի երկու կողմը, ուր խորաններ պիտի լինէին, մի մի մեծ խաչքար է կանգնեցրած, որոնց վրայ, բացի խաչածն ըրջանակով պատուած խաչից, մի մի հատ էլ մեծ աղանի է քանդակուած:

Սա իսկապէս զամբարան է, որի յատակը ծածկուած է երկու շարք գերեզմանաբարերով: Այստեղ թաղուած են:

Սմբատ արքան, որ վախճանուել է 1273 թուին.

Աթարակ Տարսայինը, որ վախճանուել է 1289 թ.

Փաթրադաւլը, Տարսայինի որդին, որ վախճանուել է 1296 թ.

Արքայոււշի Մինա խաթունը, Աղուանից Զալալ կողմակալի դուռը, որ վախճանուել է 1290 թ.

Էլիկումը Տարսայինի որդին, որ վախճանուել է 1300 թ.

Թամթայ խաթունը՝ Բուրթելի մայրը, որ վախճանուել է 1312 թուին: Սա Սմբատի և Տարսայինի աւագ եղբայր Ելիկումի կինն է եղել, Գրիգոր Մարգարանինի դուռը:

Սմբատ Բուրթելի աղան:

Բուրդան, մեծ Բուրթելի եղբայրը, Ելիկումի որդին և Տարսայինի թոռը, որ վախճանուել է 1318 թ..

Տապանաբարերից ուշագրաւ են.

Ելիկում իշխանի աղանաբարը.

Սա մի քառանկինի, տափարակ քար է, որի երեսին քանդակուած է մարդկային, թագարզուակ զլիօնվ մի տոիւժ, աջ կողքի վրայ պատկած, աջ թաթը զիթի տոկ, իսկ ձախը ձախ աղդրի վրայ պարզած, երկար պոչը փաթաթուած է ձախ ոտի վրայ և դուռած աջի վրայ (նկ. 16): Այս պատկերը վ ցանկացել են արաւ-



Նկար 18.

յայտել, որ ւառիւծօրէն իր-իստ  
մռնչէր ընդ դէմ այլասեռ գըն-  
դին \*);

Երկրորդը՝ Բուբթելի որդի  
Մմրատ վարդագոյն տղայից  
զերեզմանաբարն է, որ նոյնպէս  
մի քառանկիւնի տափարակ քար  
է, վերան երկու, միմեանց դէմ  
կանգնած աղամիներ քանդակ-  
ուած, կտուցներում մի կոտրուած  
վարդ, որով կամեցել են արտա-  
յայտել, թէ Վարդագոյն տղան՝  
Մմրատ ապրեց որքան վարդը  
կապրիւ (Տես Ալբոմ ԽIX. 32).


Այս եկեղեցու արևմտեան պա-  
տի մէջ բազւում է միակ զուոը՝  
երկական կիսաբոլոր որթասիւ-  
նիրով եղբաժակուած և կիսաբո-  
լոր կամարով պսակուած։ Սրա  
կամարակար քարի վրայ գրուած  
է, որ Տարոսյին իշխանը շինել  
է այս համբարանը իւր եղբայր  
Մմրատ արքայի համար, 1275  
թուին։

Այս արձանագրութիւնից բար-  
ձըր կան մի քանի հասարակ  
խաչեր, ապա մի շարք չափա-  
գանց գեղեցիկ վարդազարդեր և  
մի նրբաքանդակ ինչ։ (Տես Ալ-  
բոմ. պատկեր Խ. 14)։ Բարձրուած  
կայ մի նեղ և երկար պատուհան,  
շրջանակով պատած և երկու  
վարդազարդով պսակուած։

Եկեղեցին արտաքուստ սագա-  
ցէն է և շատ պարզ։ Արեեւեան  
պատի մէջ ունի մի նեղ և երկար  
պատուհան, գեղեցիկ և ինքնա-  
տիպ շրջանակով պատուած (նկ. 17)։  
Հարաւային կողմը առանձին

\*.) Այս սապանաբարի սապանագրից.

պատ չունի, այլ Ս. Կարապետ եկեղեցու պատն է. հետխային հողմի պատն էլ շատ պարզ է, ծածկուած մի ընդարձակ արձանագրութիւնով:



Նկար 27

Բուրթելաշէն եկեղեցին, թերեւս Ս. Աստուածածին.—(1339թ.) Սա բարձրանուած է հարթութեան արևելահարաւային մասում՝ և կանգնած է տռանձին, Ս. Կարապետ եկեղեցուց դէպի արևելահարաւ, մատ 40 մետր հեռու:

Երնուած է կարմրաւոյն, սրբատաշ բարից:

Եկեղեցին երկյարկանի է, որի ներքինը ծառայել է իր գոմբարան, իսկ վերինը՝ իր ազօթատուն:


Ներքին յարկը համեմատաբար աւելի փոքր է ներքինից, աւելի գեղեցիկ և նույրը բանդակիներով պատած:

Ներքին յարկը մի քառանկիւնի չէնք է. արտաքուստ 12,65 մետր երկարութեան, 8,60 մետր լայնութեան և 4,20 մետր բարձ-

բութեան. մի մետրաչափ էլ գետնի մակերեսոյթից ցածր է, այնպէս որ պէտք է իջնել չորս աստիճանի սանդուղով։ Պատերի հաստութիւնը մի մետր է։ Ներքին յարկը (նկ. 18) ներկայացնում է մի քառանկինի շնչք, չորս որմասիւնով, որոնց վրայ բոլորում են պայտաձև կամարներ՝ պահպանելով թաղակազ ձեղունը։ Սիղանի մասը, որ նոյնպէս քառանկինի է և կիսաբուլոր, մի տասնմին կամար է կազմում 1.35 մետր լայնութեան,

այնպէս որ սրա և որմասիւների միջն մեռմ են 51 հարիւրամետր լայնութեան և 25 հարիւրամետր խորութեան խորշեր։ Արեմտեան կողմն էլ, որմասիւներից նոյնքան, այսինքն 55 հարիւրամետր հեռու, 1.70 մետր լայնութեան դարձեալ մի տասնմին կամար է կազմում, որի մէջ, աջ և ձախ կողմերում, բացւում են մի մի շրջանակաւոր խորշ կամ պատրան, 1.10 մետր բարձրութեան, 60 հարիւրամետր լայնութեան և 20 հարիւրամետր խորութեան։

Այս ներքին յարկը ոչ աւանդանենք և ոչ սեղան ունի։ Արելեան պատի մէջ, պատուանից ներքե, բոլորում է մի քանդակազարդ, կիսաբուլոր կամար, որի մէջ քանդակուած է մի մեծ խաչ, աջ և ձախ կողերին



մի մի փոքրը, բարձրում 8իսուսի ցածրացանդակը։ Առաստազք վրայ էլ քանդակուած են ցուլ, տպիւ և արծիւ։


Ցատակի վրայ կան երեք մեծ գերեզմանաքարեր՝ առանց տապանագրի, մի քանին էլ կոտրատուած են և խօսիխօսւած ձգուած։

Երեք պատուան և մի գույն բացւում են սրա մէջ։

Ներքին յարկը (նկ. 19) ներքին երկարութեան և լայնութեան է, միայն իւրաքանչյւր անկիւնից մի մետր լայնութեան և 2 մետր երկարութեան կտրուած լինելով խաչաձև է զարձրած։ Ներքուստ անսիւն է, մի սեղանով, և երկու աւանդառնով։ Միայն արեմտեան կողմում, աւանդատների փոխարէն կան կամարական խորշեր։ Զեղո նը մեծ մասամբ քանդուած է, իսկ մէլին ընկած

սիւներից հետում է, որ սիւնազարդ գմբեթ է ունեցել. Սեղանը ըսլորուած է, նոյնպիսի կողակով, և երկու կողմում ունի մի որմասին: Սրանց բաղկացած են երկու կիսաբրձոր և սրանց մէջ մի քառանկիւնի կիսասներից: Խոյակներն էլ նոյն ձևի են, այսինքն կիսաբրձոր և քառանկիւնի: Այս խոյակների նմանութեամբ և նոյն բարձրութեամբ մի կարնէդ ձգւում է բոլոր պատերի վրայ, պատուհանների մօս կիսաշրջանակ կազմելով:

Սեղանի երկարութիւնը է 4.15 մետր, իսկ լայնութիւնը 3 մետր: Բեմը քարուքանդ է առուած: Բոլորուած կողակի մէջտեղում բացւում է մի երկար և նեղ պատուհան, աշ և ձախ՝ մի մի գեղեցիկ նորք: Լուսամախց վերե, կիսաբրուր ըբշանակի մէջ քանդակուած է մի աղանի և կողքերին գրուած Հոգին Սոնքը Աստուած: Սրանից բարձր քանդակուած է Քրիստոս, չորեք կերպեանների վրայ նստած, երկու կողքին մի մի թեսաբան հրեշտակ (ահա Ալբոմ պատկեր XV Տ1):



Նկար 19

Առանգամանները շատ փոքր են, 1.95 մետր երկարութեան, 10.5 մետր լայնութեան և մօս 2 մետր էլ բարձրութեան: Ունին կամարակապ սեղան և վեմբար: Սրանց զաները զարդարուած են պայտաձևաներով և մի մի վարդազարդով: Նոյն իսկ ձեղունը, որ կիսաբրուր է, նոյնպէս զարդարուած է խաչաձև քանդակներով: Իսկ աշում կայ մի պատեհազարդ գլուխ:


Արևմտեան կողմի խորշերը 2 մետր բարձրութեան են, 25 հարիւրամետր խորութեան, փոքրիկ կիսասիւններով եզրափակուած և կիսաբրուր կամարով զարդարուած:

Այս խորշերին կից բարձրանուած են մի մի կիսաբրուր որմասին, կամարներ տալով ինչպէս միմեանց վրայ, այնպէս և սեղանի երկու կողմը, աւանդապանների վերև:

Եկեղեցին ունի երեք պատուհան և մի դրւոն՝ արեմտեան

կողմում, որոնք արտաքուստ պատճե են նըրբաքանդակ շրջանակ-ներով:

Այս երկարի հկեղեցին, որի վերակադարձ պատկերը ներկայացնում է 20 նկարը, արտաքուստ հետեւալ տեսքն ունի.



Արևելեան պատի (տես ալբոն XI, 15) զրեթէ մէջակեռում կայ մի շատ զեղեցիկ վարզազարդ՝ շրջապատճեած նախ խաչաձե

և ապա ութանկիւնի, լայն շրջանակներով վերջինիս միանում  
են երկու այլ խաչաձև շնչանակներ՝ որոնք շրջապատում են վե-  
րև և ներքեն գտնուած պատուհանները։ Ներքին պատուհանի կա-  
մարակալ բարի վրայ ծաղկագրով գրուած է։



### Թուրթէլ իշխանաց իշխան (ի) Տէր Ած աւանեաւ։

Պատերը եղուափակուած են կիսաբռլոր որմասիւներով, իսկ  
վերին և ներքին յարկերի միացման տեղում զտնում է մի կար-  
ևզ, որ ժայրերից երեքական մետր ձգուելուց յետ՝ ոչ թէ միա-  
նում է, այլ բարձրանում վերև, և երեք անդ ուղիղ անկենով  
փոքր ինչ կոսրուելով միանում է՝ շրջապատելով վերին պատու-  
հանը և վարդապարզը։

Երկական որմասիւների վրայ բոլորոց կիսաբռլոր որմա-  
կամարներ զարգարում են վերին յարկի պատի աջ և ձախ կողմնըց։

Հարաւային կողմում ևս, (աես արու ԽII. 18) երկու յար-  
կերի միացման տեղում, ձգում է նոյնպիսի մի կարևէզ, որը,  
ստկայն, վերև չի բարձրանում, այլ միանում է վերին յարկի  
միակ պատուհանի շրջանակին։ Այս, երկար և նեղ, բիւզան-  
դական պատուհանի երկու կողմը, երկական որմասիւների վրայ,  
բոլորում են կիսաբռլոր որմասկամարներ։ Պատի աջ կողմում, ա-  
ւանդապատճեն վրայ, կայ մի փացրիկ, կամարակապ պատուհան։

Ներքին յարկի պատշ բոլորովին պարզ է, և ունի միայն մի  
փոքրիկ պատուհան։ Երկար շրջանակով պատած։

Այս կողմին միանգամայն նմուն է հրեսիսային կողմը, (աես  
արու պատկեր ԽIII. 17) միայն տարրերում են պատուհանների  
շրջանակները և վերին յարկի պատուհանը, որ այժմ քանդուած է,   
և որ մի քանդակապարզ սիմեակով երկու մասի է բաժանուած  
եղել։

Արևմտեան կողմում ևս, (աես արու ԽIV. 18) երկու յար-  
կերի միացման տեղում ձգում է նոյն կարևէզը, որ վերև բարձ-  
րանալով՝ երկու անդ ուղիղ անկիւնով փոքրանում է և ներփա-  
կում կամարակապ, միակ դուռը։ Մը վերև եղել է մի խաչաձև,  
փոքր և նեղ պատուհան, որ այժմ քանդուած է. մի զեղեցիկ  
խաչար գեռ ևս մնում է աջ կողմում։

Դրան երկու կողմում կան երկական որթասիմերի մըաց ըուրող կիսաբոլոր որթակամարներ:

Ներքին յարկի մէջ ևս կայ մի կամարակառ գուռն, որի երկու կոռքից, առանձյորսական տառինայի քարե սանդուխունը բարձրացնում են վերին յարկը:

Այս ներքին յարկի դռւոց բաւական լայն է. 1,20 մետր, իսկ բարձրութիւնը հասնում է 1,70 մետրի, եզրափակուած է երկական կլոր որթասիմերով, որոնց մէջ ձգում է քառանկինի մի երիգ՝ քանդակներով զեղազարդուած: Որթասիւների վրայ բոլորում է քանդակազարդ, կիսաբոլոր մի կամար, որի աջև ձախ կողմերում թառած են մարդկային գլխով մի մի ազանի: Երրուակների մի երիգ և մի շրջանակ պատում են ամբողջ դռւոց կամարակապ քարե վրայ կայ. մի ցածրաքանդակ, (անս ալրամ պատկեր ԽV 19) որ ներկայացնում է Աստուածածինը՝ Յիսուս գրկում, բազկաթոռի վրայ նստած և շրջապատուած երկու թեառարած հրեշտակներով: Աստուածածնի գլխի վերի գրուած է. Մայր Այ. աջ հրեշտակի տակ՝ Միք. (Միքայէլ), ձախի տակ՝ Գար. (Գարրիէլ), Սրանցից բարձր շրջանակի վրայ գրուած է.

### ԹՎ. 22Բ<sup>8)</sup>

Վերին յարկի դռւոց (անս Ալբոմ պատկեր ԽV 20) նոյնպէս պատած է գեղեցիկ, քանդակազարդ, կիսաբոլոր կամարով, որի վրայ թառած են երկու սիրամարգ: Թանդակների մի սքանչելի երիգ նսխակս պատում է այս կամարը, որի վերև արձանագրուած է, որ Բուրթել իշխանաց իշխանը և նրա ամուսին Վախտիւը և Բէշկէն ու Իրմանէ որդիքը շինեցին այս եկեղեցին:

Այս դրան կամարակալ քարի վրայ կայ մի ցածրաքանդակ, որ ներկայացնում է Յիսուսին, աջ ձախ պարզած՝ ինչպէս անում են այժմ կրօնաւորները՝ խազազութիւն տալիս, իսկ ձախ ձեռում մի զիրք բռնած: Արա երկու կողքին կանդնած են մի մի առաքեալ, ձեռներին մի մի բանալի: Յիսուսի գլխի վերի գրուած է. Յս. Թս., աջ առաքեալի տակը՝ Պղ. (Պօղոս), ձախինը՝ Պետ. (Պետրոս):

Ծարտապետական տեսակէտից ուշագրաւ են նաև հետեւալ Յ սիմեոնը, որոնցից երկուաը ընկած են ո. Աստուածածնի վերին, իսկ մինը՝ ներքին յարկում: Սրանք բոլորն էլ կլոր են. 40 հարիւրամետր արամագետով: Առաջնի (նկ. 21) քարձրութիւնն է 1,40 մետր, վերան մի թագակիր մարդու ցածրաքանդակ: Թագը կոնուածն բարձրանում է և մի երիցով վերջանում: Այս երիցը

<sup>8)</sup> 1239 թ. Քըիսասի:



կոտրուած լինելով, չի կարելի որոշել, թէ խաչ է ձևացրել, թէ մի ուրիշ բան, Հագուց Փարավի նման մի զգեստ է, ոչ այնքան լայն թևերով։ Մէջբան կապուծ է որի գոտի, որի ծայրերը իշխում են մինչև Փարավի քը-դանցքը։ Գևորգ վրայ կան կլոր զարդերը Զեռները մեկնած են այնպիս, իր թէ կամինում է մի բան ցոյց տալ, Սեան ներքին մասը կոտրուած լինելով չի կարելի որոշել, թէ ազանկիթը ինչպիսի են եղնել։

Երկրորդ մնից (նկ. 22) կայ միայն երկու կտոր, մինը 85, միւսը 35 հորինքամետր բարձրութեան։ Սրանց մրայ ևս քանդակուած է մի մարդ, ձւոին բռնած այս եկեղեցու կաղապարը։ Դժբաղդաբար մարզու գլխի մասը կոտրուած է։ Շատ հաւանական է, որ սա եկեղեցին շինող Բուրթել իշխունի պատկերը եղած լինի։

Ներքին յարկում զանուած սեան մրայ քանդակուած է Աստուածածինը Քրիստոս գրկում, (նկ. 23)։

#### Նկար 21.

Անորին մի բազէ բռնած։ Գլխի մասը կոտրուած է, հանգերձը Փարավի նման է և գօտիով ամրացած։

**Հիւրաստուն.**—Պարսպից դուռ, արևելեան կողմում կայ մի սակացէն, փոքրիկ մատու (նկ. 24) թաղակապ, հասարակ շէնքով, և մետք երկարութեան, 2,35 մետր լայնութեան և մաս 5 մետր բարձրութեան։ Ունի մի հասարակ զուռն և երկու փոքրիկ պատուհան։ Սրա բոլորանե սեղանի երկու կողքին կան մի խաչքար, որոնցից ոշակողմեանը բաւական մեծ է և կըում է իր մրայ մի ընդարձակ արձանագրութիւն։ Սա յայտնում է թէ Սար-գիս եպիսկոպոսը Ենթամանաւ պարունաց իւրոց Տարսայինին, եղբաւը Սմբատայ արքայի և ամուսնու իւրոց Մինայ խաթունին և եղբարց իւրոց Լիպարիտի և Թաղային շինեցի զնիւրատունաց-ապա յիշասակում է այն գիւղը։ Հրադացը, այդին, հողարաժինը՝



ՆԿԱՐ ՀՀ

Սր. յատկացրել է հիւրատանը, որոէս-  
զի սրանց և մուտքն հիւրերին պէտքն,  
անցւոր օտարքն ուտեն, իւր պարոնաց  
համար աղօթք անենց և իրեն յիշեն.  
Արմանագրութիւններ.—Ա.Կարապե-  
տի հիւրատային պատի վրայ՝ ներքուստ.

Ի թվն. թէ (=1221) կաման  
Ա. ես Լիպարիտ որդի Ալակումի  
եւ թոռն մեծին Աւրաբելեանց զի  
հայրն իմ Ալակումին քենացաւ ի  
թագաւորէն Արխոգաց զնաց ի  
տունն Աթարակի Ելտկուզանց եւ  
նա մեծաւ գատով (զթով) մեծա-  
րեաց զնա. ետ նմա զմեծ քա-  
ղաք Համբան, ես Լիպարիտս որ-  
դի նորա մանսուկ զոլով զարձա  
վերստին ի լուսաւոր հաւատն  
սրբոյն Գրիգորի. եկի առ մեծ  
Աթարակ Խւանէ. հայրինեացն փո-  
խան երեա զէրաշկարերգ իւր կե-  
րովն եւ ես շինեցի զվանքս, որ  
կոչի նորավանք յաւաշնորդութեան:

Տն. Սարգսի Միւնեաց վերադիտողի. շինեցի զեկեղեցիս  
եւ Աւագ սր. Նշանս առ Աթարակ Խվանէին աւանդ էր...  
ետու այլ... զեղը զԱզարակի ճորու, Տխարը իւր սահմա-  
նաւրն. Տէր Սարդիս եւ միաբանքս հաստատեցին ինձ զա-  
ւագ խորանն դ. աւը ժամ կիրակէն ի շարաթն եւ զինդ-  
շարաթն ի յամէն շարաթու իմ եւ կենակցին իմոյ Ազ-  
գափին. սահմանեցին ի տարին Տեառն ընդ առաջ աւըն  
զամէն եկեղեցիքս. արդ որք ընթերցայք զզիրս խնդրե-  
ցէր ի Քէ իմ որդոցն Ալուկումին, Սմպատա, Խւանէի,  
Փախրազաւլային, Տարսային արեւշատութիւն. Արդ որք  
այս հաստատուն զըօյս հակառակ կայ յիմոց կամ յաւ-  
արաց աւագաց Հայոց կամ ի Վրաց զայն զեղաւրէքն  
հանել շանան կամ զժամն խափանել Յժմ. հայրապետաց



Նկար 23

տաւնին Ա. պատարագ ինձ Շա-  
տլոյսիս. Արդ որ մեր բանիս հա-  
կառակ կան ի մերօց կամ յաւ-  
տարաց կամ պարօնաց կամ ձեռ-  
նաւորաց հակառակին ՅԺ. հայրա-  
պետացն նկովեալ եղեցի, իմ մեղացն  
պարտական եղեցի. ի թվին 2b (=125b)

հաստատ է:

Սրա մօտ.

Կամաւն Այ. ես Հաջարի եւ ամու-

<sup>\*)</sup> Սրա ոռոկ զանում է Ստեփանոս եղիսկողոսի 1296 թուականի-  
որ ժամանակութիւնը (Ցե երկուսն էլ իմ լուսաբիզ ալբոնի մէջ).

նզոված է եւ մեր մեղացն  
պարտական է, եւ թէ տաճիկ  
աւագ փոխի եւ հանել զա-  
նայ՝ իւր հաւատէն ու ի  
Մահմետէ ապիզար է. ու Ռ.  
Ռ. Ռ. Նալաթ Նալաթ \*),  
ժամատան հիւսիսային պատի-  
վրայ:

Թի. ՈՉԱ. (=1232) Գ(է)որդ  
զիմ հօգոյ արդիւնք տվի ի սր  
Նախավկայս մասն պահարա-  
նով... եւ Տէր Սարգիս եւ  
միարանք սահմանեցին զսր  
Գէորգին շարաթն Բ. պատա-  
րագ անխափան:

ժամատան հարաւային պատի-  
վրայ.

Յանուն Այ. ես Շատլոյս  
եկի ի Նորավանս եւ եկեղեց-  
ւոյս միարանեցայ ու զիմ  
ձեռատունկ այզին ի սր.  
Նախավկայս տվի. Տէր Ստե-  
փաննոս եւ միարանք հաս-  
տատեցին

Աստուածածնի



Նկար 24

Աստուածածնի

սին իմ Մէլիք ոչ ունէաք զաւակ, երբ որ խոստացաք զմեր կանգնած երանելի սր. Նշանս եւ տուար զմեր ձեռատունկ այդին ու չորս դուռն տուն մեր շինած ի Զվայ. Տէր Սարդիս եւ միարանը հաստատեցին ի տարին Դ. պատարագ. Կատարիշըն աւրհնին լԱ. եւ խափանիշըն դատին ի Տեառնէ. Ավ որ հակառակ կայ ՅԺ-Ը հայրապետացն նզովեալ եղեցի.

Ժամատան հարաւային պատի վրայ, Ներքութեաւ.

Ի թվիս 2Ժ (=1261). Այս գիր յիշատակի եւ արձան անշնչելի իմ Սմբատայ իշխանաց իշխանի որդուոյ մեծին Լիպարիտի... շինեցի զեկեղեցիքս, վերստին նորոգեցի.... պահարանաւոք եւ ետու իմ հայրենինեացն Բ. զիւղ ի սր. Նախավկայս, զԱւէշ ու Անապատ, եւ յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր կիւրակաջրով. Տէր Սարդիս եւ միարանը հաստատեցին զաւադ խօրանն որ հանապազ պատարագ պարոնացն առնեն. զշարաթն ու զկիրակի՝ Լիպարիտի, հինգշարաթ՝ Ասփային, զերկուշարաթ ու զերեքշարաթն՝ Ելիկումին, շոբերշարաթն՝ Իվանէին, ուրբաթն՝ Փախրաղուլային... Արդ՝ որ յետ մեր ժառանգն ի տեղոյս յիմոց կամ յաւտարաց եւ այս հաստատեալ պայմանիս հակառակել ջանայ եւ կամ ի սր. եկեղեցոյս հանել կամ զժամ խափանել՝ մեր մեղացն պարտական է, եւ զանէծս ցաւազին զեայլնին եւ զԴայիզին առցէ ի բաժին զՅուղային եւ զխաչանանեացն. եթէ ոք 'ի տաճիկէ յաւադ փօխի ու հանել ջանայ լԱյ...

Սրա շարունակութիւնը գտնւում է արևմտան պատի վրայ.

Ցուսովն Ա. ես Սմբատ իշխանաց իշխան իմ սրտի յաւժարութեամբ տվի ի սր. Նախավկայս իմ հայրենինեացն զԱզատն իւր սահմանաւոք լիբամբը եւ զաշտաւը, և զիմ... Դինէշիկաձոր վասն ֆրկութեան հոգւոյ եղբաւը որդւոյ իմոյ Բուրթէլին, որ զեռաբոյս նորափթիթ փոխեցաւ առ. Ք. պատերազմաւ ի զաշտին Սկիւթացւոց. խաւարէած տեսողաց. եւ.. Ֆ. իւր նովաւ զաւակ յիշատակի. Տէր Սարդիս եւ այլ միարանքս հաստատեցին ԺԵ աւր պա-

տարագ. Ե. աւը աւագ տաւներն, Ե. Պետրոսի եւ Պաւղոսի տաւնին եւ Յովհաննու եւ Յակովրայ եւ Նոր Կիրակէին. Կատարիչըն աւընին եւ խափանիշըն դատին ի Տէ. եւ որ զգեղին եւ զայցին հանել զանայ, ՅժԸ հայրապետացն նզովեալ եղիցի.

Կաման Այ. ՚ի տէրութեան իշխանաց իշխանի Սըմ-րատալ եւ յառաջնորդութեան Քրիզորի ես Ասփասլան եւ Մխիթար քահանայ Այ.... եւ տվի զ՞ահանեկոյ քարոյ այգին Նախավկայս..... եւ գետով. Քրիզոր եւ այլ միաբանք տվին Համբարձման աւըն զամենայն.... տիրացու Դաւիթն.... եկեղեցիքս պատարագ Ը. աւը. Ա. Թամարին, Ե. Ալիքասլանին Բ. Դամաին. Կատարիչըն աւընին յԱյ:


Ս. Կարապետի արևմտեան պատի կամորի վրայ, Ներքուսու- ս Տէր Սարգիս, քեռորդի Տէր Ստեփաննոսի Սիւ- նեաց արհի եպիսկոպոսի շինեցի զեկեղեցիս ի բարեխաւ- սութին ինձ եւ Լիպարտին եւ նախնեաց մերոց եւ եր- կուց հարազատ եղբարցն, որ սպանան ի թուրքաց պա- տերազմաց. վասն որոյ աղաշեմ հանդիպողացդ յիշել զմն ՚ի Քո:

Ս. Կարապետի արևմտեան կողմի ներքին աւանդատան հա- րաւային պատի վրայ.

Ցանուն Այ. այս զիր է Տէր Սարգսի եւ սպասաւո- րաց սր. Կարապետիօ, որ տվաք զխորանս Հասանայ Ա- մազուցւոյ, որ նորա հալալ արդեամբ շինեցաւ. ի տա- րին Բ. աւը ժամ հաստատեցաք զՊետրոսի եւ զՊաւղոսի- տաւնին. Ա. Հասանոյ, Ա. իւր կնոջն. եւ որ հակառակ...

Ժամատան արևմտեան պատի վրայ. (տես նկ. 25).

Ցանուն Այ. ես Սարկաւագ երէց որդի Մկրտչին եկի ի Նորավանա... Նշանիս աւազի, իմ սրտի յաւժարու- թեամբ զիմ զնած հայրենիքն.... զիսաշ...զենց այգին եւ զիմ հովատունս իւր սահմանաւն.... եւ խոճառաբատուն.... յեղեգնաձոր իմ զնած՝ եկեղեցոյս տվի, որ ի տարին միաբանըն սահմանեն պատարագ ի տաւնին Աստուա- ծածնի... յիս հայրենեաց... թվ. Զի =1271).



## Նկար 25.

մանաւըն յորդեց յորդիքն նորա հայրենիք տվի ու ինչ գեկեղեցին լմնեցին Խիշայ կօւտայաք Մ. սպիտակի այն խիլային փոխան զԱղազաք Սղերծեցին տվաք նորայ հայրենիքն լինի, նորայ գեղին կայ յազգէ յազդ ու գչալէ ձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաթում սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրա, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ շկայ հետ հալլէ ձորոյ, ոչ շոք տացի ոչ այլ ոչ ում. ով յետ մեր զայս հաստատ

\* ) Տես ընդօբինակութիւնը իւ Վայոց-Զորի լուսանկար ալբումի մէջ.

Մ. Գրիգոր դամբա-  
րանի դրան վերև.

Կամաւն Այ. և  
Տարսային իշխա-  
նաց իշխան շինեցի  
զղամբարանս յա-  
զագս եղբաւը իմոյ  
Սմբատայ արքային.  
վասնորոյ աղաշեմ  
յիշել, թվին Զի՞Դ  
(—1275).

Նոյն դամբարանի հիւ-  
սիսային պատի վրայ  
մեծ մեծ տառերով. \*

Կամաւն Այ. այս  
իմ գիր է Տարսա-  
յինիս իշխանաց իշ-  
խանիս, որ իշխե-  
ցող էի Սիւնե(ա)ց  
նահանգիս Ոքոտան  
եւ Ծնհերոյ, որ եկե-  
ղեցի տվի շինել  
Սիրանէս վարդապե-  
տին ու Հայիձորոյ  
ու Շնհերոյ հայրե-  
նիքն տվի իւր սահ-

վճիռս խափանէ ու դմեր հրամանքս ունայն առնէ յերից  
սուրբ ժողովոցն որոշեալ եղիցի եւ մասն եւ բաժին ընդ  
Յուղայի եւ ընդ խաչանանուացն եղիցի. ես Ցարսայինս  
իմ ձեռաւք հաստատեցի զգիրս զայս.

Ժամատան արևմտեան պատի վրայ. (Տես նկար 28).


Կամաւն Այ ես Ամիրայս, թռուն Ձուրջին եկի ի Նո-  
րավանս առաջի սր. Նշանիս ու զՅաղթա այգին որ ի  
պարոն Տարսայինէն զնեցի Դ. Ռ. զրամաւ եւ Գ. չորի  
տվի սր. Ուխտիս վասն իմ հոգւոյս եւ իմ մաւրն Դուռար  
խաթունին. Տէր Ստեփաննոս եւ միարանք կարգեցին Դ  
ժամ. Բ. ինձ, Բ. իմ մաւրն Հոլիփումիմ(ա)նց տաւնին.  
Արդ՝ թէ ի մեր յետամացողաց կամ ի պարոնաց եւյա-  
ւագաց հակառակելի ջանայ ու զիմ Դ. Ռ. դրամն եւ Գ.  
ջորին ի Նորավանիցն հանէ... ի սր. Երրորդութենէն եւ  
յերից սր. Ժողովոցն նոզինալ եղիցի եւ բաժին զՅուղա-  
յին առցէ, եւ մեր մեղացն պարտական եղիցի. ի թվին  
ԶԽ (=1291) հաստատ է զիրս կամաւն Այ.:

Դամբարանի հիւսիսային պատի վրայ. \*)

Կամաւ Ամենակալին Աստուծոյ աւս զիր յիշատակի  
եւ արձան անջնջելի Մինա խաթունիս է, զստեր մեծի  
արքային Զալալին եւ ամուսնո մեծարգի իշխանի Տար-  
սայինին, եւ իմ որդուոյս Զալալին, որ զնեցաք ի մեր հա-  
լալ ընչից զնորպետին այգին ի Վէդի եւ զայն ի Կորդո  
զնեցաք ի հայրենատիրացն եւ տնկեցաք. եւ բոլորեցի  
զԴ զեն. Ա. ճակատն Բնաշահու Ահնուէլպղումին այգին.  
Ա. ճակատն իրիցին այգին, Ա. ճակատն Որբէկին այգին,  
Ա. ճակատն Բրէհիմին այգին. Տեղն մԲ զրգի զոր յառաջ  
այլ տված էր վանիցօ՝ մեր մեր յաւժարութեամբ վերս-  
տին տվաք ի Նորավանս յԱւագ սր. Նշանս եւ ի Տր.  
Ստեփաննոս. վասն հոգեց արքաաշուք տո իմո Տարսայի-  
նին. իսկ տր. Ստեփաննոս եւ միարան եղբարձրս կարգե-  
ցին ժամ յիշատակ անզինջ զտաւնին Համբարձման, զի  
յայնմ աւուր հանդիսիւ աւրհնեսցին զշիրիմս նորա եւ Ժ.

\*) Տես իմ Վայաց-Զոր լուսանկաց ալբումի մէջ.

աւր պատարագ մատչի. եւ այս տուրքս ոչ ի զրկանաց, ոչ ի զեղէ, ոչ ի պարոնահողաց, այլ մեր հալալ դրա-



մաղին, աղատ յամին հարկաց, որ ոչ ում հաշիւ չկա ի հետ. Աբդ՝ թէ ի մերոցս կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց զինչ և իցէ պատճառաւ նենգել կամ

Հանել ջանան զայս այգիս ի նորավանից կտրեալ լիցին նոքա յերկու կենաց, ընդ աւձին եւ ընդ սատանաի նզովեալ եղիցի յամենակալ բերանէն յԱյ. գհայէնին եւ զթուղային, զթուիանոսին առցէ վարձ, ընդ Վասակա ուրացողին դատեսցի, յերից սուրբ ժողովոցն եւ յամենայն սրբոց անիծեալ լիցի ի մահ եւ ի կեանք. եւ թէ տաճկաւ ոք փօխի եւ հանել ջանայ Ռ. Ռ. Ռ. նահարթ լինի. յիւր Մահմետէն ապիզար լինի. ի թվին ԶԵԱ (=1292) հաստատ է զիրս կամաւն Այ.:

Ժամատան հիւսիսային պատի աջ կողմը.

Կամաւն Այ. ևս Խաթունս՝ զուստը Խալայշահի միաբանեցայ սր. Նշանիս ու տվի Յ. սպիտակ. ի յԱռվա այգի գնեցի մաւտ ի... Տէր Սարգիս եւ միաբանք սահմանեցին Բ. աւր պատարագ Խաթունիս:  
Սրա տակ.

Կամաւն Այ. ևս Գոնցէ՛ թռոռն Հասանայ, դուստը պարոն Խաւսրավկայ միաբանեցայ սր. ուխտիս նորավանից վասն բարութեան իշխանաց իշխանայ Բուրթէլին եւ տվի զեանազահի էզին Ամազինի հոգւողն. միաբանքն խոստացան Զ. պատարագ Յալտանութեան ութաւրացն. Բ. ինձ. Բ. Ամազինայ Բ. Հասանայ, Այս մեր թուղթն է. թվին ԶԵԴ (=1295)

Ս. Կարապետի հիւսիսային պատի վըայ Ներքուստ, ՈՀ թռւականի արձանագրութեան տակ. \*)

Ծնորհաւը եւ ողորմութեամբ սր. Երրօրդութեան, յուտով առ Ք. ևս յոզնամեղ եւ ապիկար Ստեփաննոս, որդի իշխանաց իշխանին Տարսայինին, եպիսկոպոս Սիւնեաց եւ տեսուչ Երկնանանդէս աթոռոյս Տաթեոյս եւ Նորավանից, յիշելով զունայնութիւն վայրկենի կենացս, ետու զիմ հոգւոյ մասն եւ բաժին Այ. եւ ժառանգ(ութիւն) սր եկեղեցւոյս զԶովայ զիւղն իւր բոլոր սահմանաւրն ազատ յամեն յաշխարհական հարկաց ի դիւանէ, ի խալանէ եւ յամեն չարէ, զոր զնե(ա)լ էի յիմ ախրաւրէն ի

\*) Տես իւ Վայոց-Զերէ լուսաւիպ ալբոմը.

Զալալէն եւ տվեալ ի՛ռ հազար դրամ եւ Փողահանքն զսր-  
Սահակ եւ զԱբասաշէն. եւ այլ ետու յիմ հալալ հայրե-  
նաբաժնէն ի Հըաշկաբերդ Քարկոփիյեանքն իւր ստո-  
մանաւքն յԵղեգիսաձորին, զԱբատեսն իւր զեղաւքն եւ  
ամէն հայրենիքն իմ արարի ժառանգութիւն սր. ուխտ(ի)ս  
Նորավանից հայրենիք անխախտ եւ անդառնալի մինչ ի  
գալուստն Այ. եւ այլ բազումս եւ կամաւ միաբան եղ-  
բարցս հաստատեցի ինձ յիշատակ ի սա զի զինի կըթէ-  
նազատկին պատարազեսցն եւ ամէն աւը անրիծք եւ  
աւետարան ինչ ի Հոգոյ գալուստն. եւ զաւը Պենտէկոս-  
տէին մնզ յիշատակ կատարեն զենմամբ զուարակաց եւ  
առատ ռոճկաւը, եւ յամէն եկեղեցիքս մնզ պատարագ-  
թերես զտից յԱստուած Հոգոյն ողորմութիւն եղկելի  
հոգոյս ի մեծի աւուրն աներեկի, ուր բանքն սպառին եւ  
գործքն թազաւորեն, եւ արդ՝ եթէ ոք զայս խաբանել  
խորհի կամ յափշտակել զտուրքս եւ կամ ի ժառանգա-  
տրացզ ծուլանալ եղեալ սահմանիս, ընդ անլոյժ նզո-  
վիւր եղիցին յԱյ. ամենակալէն եւ յամենայն սրբոց յերկ-  
նաւորաց եւ յերկաւորաց, ընդ Կայէնի եւ ընդ Յուղայի  
եւ Արիսոի պատժեալ խայտառակենցին եւ մեր մեղացն  
պարտական եղիցին. եւ թէ տաճիկ փոխի եւ խլել ջա-  
նայ, յԱյ. եւ ամենայն սրբոց նզոված եղիցի. եւ յիւր  
փեղամբարէն ի Մահմետէն ապիկար. Ռ. Ռ. նալաթ լինի  
մեռելաւը եւ կենդանաւը 'ի թվիս ԶԽէ (=1296) հաս-  
տատ է:

Մի քիչ ներքեւ.

Կամաւն Այ. ես Տարսայինս ետու էրենարտն իւր  
սահմանաւքն նորավանից վանս:

Կամաւն Այ. ես Սահնճար որդի Տարնորապուին ոչ ու-  
նելով զաւակ երկրի՝ որ սահացայ ինձ զաւակ զսր. Նշան  
եւ տվի իմ հալալ հայրենեացն զՑանձեկ իւր սահմանաւքն  
եւ այզովն ի Նորավանքս. եւ Տէր Ստեփաննոս եւ միա-  
բանքս սահմանեցին ինձ ի տարին Ե. ժամ. թէ ոք խա-  
փանել ջանա; ի սր. Երբորդութենէն նզովեալ եղիցի եւ

մասն զՅուղային եւ զիաշահանուացն առցէ եւ մեր մեղացն պարտական եղիցի. ի թվիս 288 (=1303).

Դամբարանի հիւսիսային պատի վրայ, Ներքեւու. d.

Կաման Այ. ի հայրապետութեան Տէր Աւրբէլի Յովանէս Սիւնեաց եպիսկոպոսի ևս Գրիգոր թռոն Դոփին զնեցի ի Դամնկորարոյ զԵատենց եւ զՄարդարտայ այդին ԾԵ սպիտակ. եւ ետու ի սր. ուխտս. վասն որոյ ի



Նկար 27

տարին ամուսնոյ իմայ Աստվային, դստեր արքայաշուր իշխանին Տարսայինին պատարագ Գ. աւր ֆոխման Աստուածածնին. Ա. Տեառնընդառաջին, Բ. բուն բարեկենդանին, շարաթ աւրն եւ կիւրակէն անխափան. Կատարիչըն աւրնին Այ. եւ խափանիշըն դատին ի Տեառնէ. թիւն 24Ա (=1312).

Ս. Աստուածածնի վերին գրան բարձրութ.

Կաման Այ. ևս պարոն Բուրթէլ իշխանաց իշխան

եւ ամուսինն իմ Վախախ եւ որդիք իմ Բէշկէն եւ հվանէ կանգնեցաք զեկեղեցիս ի մեր հալալ արդեանց.

Այս արձանագրութեան երկրորդ քառը վայր էր ընկած, որ ես նկարել առեւի.

Սա պարունակում է արձանագրութեան հետևեալ տողերը.

Պարզն Բիւր(թէլ) եւ(ւ) ամուսին իմՎ(ախախ եւ որդիք)ք կանգ(նեցաք) զեկեղեցիս մեր հալալ (արդեանց).

Ս. Աստուածածնի արեելեան ներքին պատուհանի վերն.

Բուրթէլ իշխանաց իշխանի Տէր Աստուած աւղնէ:  
Հիւրատաւնա կոչուած մատրան հարաւային պատի միջի խաչ-  
քարի վայր. \*)

Յուսովն որ առ Ած. ես Սարգիս անարժան եպիսկո-  
պոս կամաւ եւ հրամանաւ ամենաւրհնեալ պարոնացն ի-  
մոց Տարօայինին, եղբաւը Մմբատայ արքայի եւ ամուս-  
նոյ իւրոյ Մինայ խաթունին եւ եղբարց իւրոց Լիբարի-  
տի եւ Թաղային, շինեցի զիւրատունս եւ ետու հիւրա-  
նոցս զիւղ զԱւէշ իւր ամէն սահմանաւրն, եւ զերկու ակն  
ի ջաղացն յԱրփայ եւ այզի զՄիթամարենց բաժինն ի վանքո  
զԹումային, զԱվանէսին եւ զՊետրոսին յԱկոսի զՆծնսա-  
գուուն ի Վէղէ զպարոնէս զնած բաժինն հող, ի նրբոյն  
զՄարական փորակ, յԱզարակի ձոր՝ Վարդուան, յԱզա-  
տին՝ զՃաղուունն Սարին՝ զԱկներ, յԱնապատ զԹզե-  
նին. Որ զայսոց մուտքն ի հիւրերին պէտքն անցւոր աւ-  
տարքն եւ կամ ուտելիքն ուտեն, պարոնացն երախտա-  
տորացն աղաւթք եւ Ած. ողորմեա ասեն. յիշելով զիս եւ  
զիմ աշխատասէը Առաքելն. որ յետ մեր զայս սահմա-  
նեալն... յայս Հիւրատանէս հանել ջանայ կամ խափանել՝  
ինքն յԱյ. դատի եւ մեր մեղացն պարտական է:

Ս. Կարապետի հարաւային աւանդատան զրան վերն գըր-  
ուած են մի քանի հին տապանագրաբեր և մի խաչքար, վերջինս  
նոյն իսկ գլւիկայր: Մրանց տապանագրերն են.

Ցիշեա Քրիստոս Ած. զՄարգսի հողին եւ ողորմեա  
թվ. Որ (=1201).

Ցիշեա Քրիստոս Աստուած... եւ ողորմեա.

\*) Տես իմ Վայոց-Հոր լուսատիոն ալբոմը.

Ի թվ. ԱԿԲ (=1213) կանգնեցաւ խաչս ի բարեհաւատութիւն Գըիզորի, որ փոխեցաւ ի Քս....

Մի խաչարի վրայ.

Այս նշան աւծելոյն Ա. կանգնեալ ի բարեխաւատութիւն իշխանաց իշխանի Հասանայ որդւոյ Սենեքերիմայ արքայի, որ կէսաւրեայ փոխեցաւ առ Քս. զրկեալ ի հայրենի փառացն...

Ժամատան մէջ. Ա. շարքի Դ. դամբան.

Բարեպաշտ իշխանաց իշխանին Այլիկումի է տապանս \*),

Ժամատան մէջ. Ա. շարքի Ե. դամբան.

Քաջ սպառագէնն է Փախրագուշայն \*\*\*),

Ժամատան մէջ Ա. շարքի Ը. դամբան.

Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս. թվ. 20 (=1260),

Ժամատան մէջ Ա. շարքի Զ. դամբան.

Զբարեպաշտ մայր իշխանացս զԱսփնայն յիշեցէք\*\*\*\*),

Մի խաչարի վրայ.

2ԺԲ (=1269). Ես Դեղ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ եւ բարեխաւատութիւն...

Ս. Գրիգորի գամբարանում Ա. շարքի Բ. դամբան.

Սմբատ արքային է տապանս. յիշեցէք թվ. ԶԻԲ (=1273),

Ժամատան մէջ Դ. շարք ժթ. դամբան.

Թվիս 2ԻԳ (=1274). Տուն իմաստից եւ հանճարոյ Աւրպիլ Յովհաննէս հոչակատոր մետրագոլիտ Սիւնեաց.

Ժամատան հարաւային կողմը մի խաչարի վրայ.

Կամաւն Ա. ես Կուգօր որդի Ախմամարին կանդնեցի զխաչս յաղագս մաւր իմոյ Ասփային. Որ երկրպագէք յիշեցէք ի Քս. ի թվիս 2ԼԳ (=1284),

\* ) Վայենանուել է 1253—5 թ.

\*\*) Լիոպարիտ որդին է, որ վայենանուել է 1260 թ.

\*\*\*) Տարսոյինքի և Սմբատի եղբայրն է վայենանուել է 1260 թուրք.

\*\*\*\*) Սա Տարսոյինքի հօր՝ Լիոպարիտի կինն է, Բուրգար իշխանի դուռը, վայենանուած 1263 թուրք.

Սըս մօս մի այլ Խաչքարի վրայ.

Կամաւն Այ. ես Կուղոր որդի մեծ Ալբամարին  
կանգնեցի զխաշս եղբաւը իմոյ Փալկայ որ կիսաւրեայ  
փոխեցաւ ի Քս. թվ. 21.Դ (=1285):

Ս. Գրիգորի դամբարանում Ա. շարքի Դ. դամբանի  
վրայ.

Ի թվիս 21.Ծ (=1289). Այս է հանդիստ արքայա-  
շուր կողմանակալին հզաւը եւ մեծ գործակալին եւ քաջա-  
պահ մենամարտին Աթարակ Տարսայինին:

Մի խաչքարի վրայ.

ԶՏիրատուր եւ զամուսին իւր Խաթուն յիշեցէք. թբ-  
վին 2Խ (=1291).

Ժամատան մէջ ժէ դամբան.

Զգեղեցկափթիթ ծաղիկն եւ զբաջուղէշ մանուկն  
վաղաթառամ հվանէ, յիշեցէք թվ. ԶԹԴ (=1294):

Ժամատան մէջ Բ. շարք ժ. դամբան.

Զբարեպաշտ տիկինն զնաթէլն յիշեցէք. թվ. 2ԽԴ  
(=1295):

Ժամատան մէջ Բ. շարք ժ. դամբան.

Վայելչագեղ եւ դեռաբոյս պատանին Ուլուսն յիշե-  
ցէք թվ. ԶԽԴ (=1295):

Ս. Գրիգորի դամբարանում Ա. շարքի Ա. դամբանի վրայ.

Այս յարկ տապանի բանդ բարկութեան է եւ զուր  
զերութեան հբաշագեղ մանկանն եւ քաջազաւը երիտա-  
սարդին Փախրադաւալին որդուոյ մեծափառ իշխանին Տար-  
սայինին, վասն որոյ աղաչեմ յիշել. թվին 2ԽԵ (=1296):

Ս. Գրիգորի դամբարանի Բ. շարքի Բ. դամբանի վրայ.

Ի թվին 2ԽԵ (=1296). Թաղաղարմ արքայունին է  
Մինայ Խաթունն, դուստը մեծ կողմանակալին Աղուանից  
Զալալին:

Ժամատան մէջ Ա. շարք ժ. դամբան.

Այս շիրիմ շնորհալիք Սարգսի է Միւնեաց եպիսկո-  
պոսի եւ անյաղթ հոետորի. թվ. 2ԽԵ (=1298):

Ս. Գրիգորի դամբարանի Ա. շարքի Գ. դամբանի վրայ,  
ուր կայ մի առիւծի ցածրաբանդակ (տես նկար 16):

Թվին ԶԽԹ (=1300) Զգեղեցկատիպն էլիկում, որ-

դի մեծին Տարսայինին, որ առիւծաւը խրոխտ մռնչէր ընդդէմ այլասեռ զնդին, աղաշեմ յիշել յաղաւթս:

Դամբարանի հիւսիսային պատի մէջ կողքի վրայ դրուած մի խոչքարի վրայ:

Զայս նշան Յիսուսի խաչելոյն ... Տեառն Աստուծոյ վասն վրկութեան մարդկան՝ կանգնէ յուսով քրիստոսաւէր իշխանունի Թաթմա խաթուն ի բարեխաւսութիւն զիք.... իւր մեծափառ իշխանին Էլիկումին, եւ վասն յերկար կենաց զաւակաց իւրոց Բուրթէլին եւ Բուզզային:

Ժամատան մէջ Դ. շաբթ Բ. դամբան:

Ի թվին ԶԵԴ (—1304) Այս է շիրիմ հանգստեան մեծի մետրապոլիտ Սիւնեաց Ստեփանոսի:

Ժամատան մէջ Ա. շաբթ Բ. դամբան:

Տէր Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս թվ. ԶԵԴ (—1305):

Ժամատան արևմտեան գրան աջ կողմը կանգնած գեղեցիկ խաչքարի վրայ (տես Ալբում VIII 12):

Ես Թամթա խաթունս կանգնեցի դիսաշս ի փրկութիւն հոգո Աթապէկ Տարսայինին եւ յարեւշատութիւն որդոց իմոց Բուրթէլին և Բուզտային. թիւն ԶԵԼ (—1308). Մոմիկ վարդապետ յիշեցէր.

Ս. Գրիգորի դամբարանի Բ. շաբթի Դ. դամբանի վրայ:

Զաշխարհաշէն զշխոյափառ պարոն զԹաթմայ խաթունն, մայր Բուրթէլին յիշեցէր \*) թվին ԶԿԱ (—1312):

Ժամատան արևմտեան պատի հիւսիսային կողմի խաչքարի վրայ:

Ի թվիս ԶԺ (—1261). Ի կամս ողորմութեան Արարշին ես Բուրթէլ որդի Էլիկումին, որդւոյ մեծ Լիպարտին կանգնեցի զիսաշ աստուածընկալ սր. նշանս մաւր իմոյ Թաթմայ. յիշատակ յաւիտենից. աղաշեմ յաղաւթս յիշեցէր ի Քս.

Ս. Կարապէտի ժամատան մէջ Բ. շաբթ ԺԱ. դամբան:

Զբարեպաշտ պարոնն զնաթէլին յիշեցէր. թվ. 2ԿԲ (—1313):

\*) Թոքուս խոթունը Տարսայինի որդի Էլիկում ԶԵԼ կինն է եղել.

Ս. Գլիգորի դամբարանի Բ. շարքի Դ. գերեզմանաքարի վրայ.

Եղբայր մեծ Բուրթէլին զգեղահրաշ Բուղդային երիտասարդ հասակաւ, որ յիտ յոլով քաջ մըցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ զպասկ. թվին 24է (=1318).

Կոորուած և դուրս ձգուած մի գերեզմանաքարի վրայ. (տես Ալբոմ, պատկեր 31X. 32.).

Վարդապոյն տղաին Սմալատ որդի Բուրթէլին. յիշեցէք.

Ժամատան մէջ Գ. շարք Ի՞ն. դամբան.

Այս է հանգիստ Առաքէլ եպիսկոպոսին, որ հանգեաւ թվ. Ռի (=1571).

Ժամատան մէջ Բ. շարք ԺԴ. դամբան.

Զվաղաթառամ զՄամու(էլ) յաղաւթս յիշեցէք.

Ժամատան մէջ Ա. շարքի Բ. դամբան.

Աւրիսրդն է Թամթիկ. յաղաւթս յիշեցէք.

Ժամատան մէջ Ա. շարքի Է. դամբան.

Տէր Յոհաննէս Սիւնեաց եպիսկոպոս.

Ժամատան մէջ Ա. շարքի Ա. դամբան.

Զպարոն Թաղենց:

Ժամատան առջն մի խաչքարի վրայ.

Ցիշատակ է հաւրեղբաւը իմոյ Առաքէլ եպիսկոպոսին. թվին Ռոժմ (1611).

Մի խաչքարի վրայ.

Տէր Ած. Յս. Քս. Այս է Տէր իմ աւրհնեալ ահեղ անուն Այ. ի ծագաց մինչև ի ծագս ծագի լոյս. թվին 22 (=1321).

Ժամատան արևելեան պատի Հարաւային կողմի գեղեցիկ խաչքարի վրայ.

Ես Յովհաննէս Առաքէլ Սիւնեաց արհի եպիսկոպոս շինող սր. եկեղեցւոյս, յիշել աղաշեմ (զիս) եւս, եւ զրաբեպաշտ իշխանաց իշխան զարեան մնածաւորն իմ զքաջ մնամարտիկն զԲուրթէլն եւ զդշնոյափառ քրիստոսաօէք զոյգն իւր Վախախն, նորաբողբոջ զաւակաւըն իւրեանց Բէջքէնիւն եւ Խվանէիւն. թվին 22Ա (=1322).

Սրա կողքի խաչքարի վրայ.

Այս Դայիսոն մխեալ արեամբ աւծելոյն Յիսուսի, ո-  
րով հարեալ խոցեցաւ զոռողն անմարմին. եւ կանգնեցաւ  
հրամանաւ ածապաշտ իշխանաց իշխանի Սմզատի ի  
փրկութիւն որդո իւրա Բուրթէլին. յիշեցէք.

Ո. Աստուածածին եկեղեցու մատ մի խաչքարի վրայ.

Ես պարոն Բուրթէլ կանգնեցի զխաչս ի փրկութիւն  
հոգւոյ վասն եղբաւը իմ Բուրդպային:

Ո. Կորտապետի եկեղեցու մատ մի ասպանաքարի վրայ.

Կայ հանգուցեալ յայս տապանի,

Զքնաղ մանուկ զարմանալի,

Որ իվանէ անուն կոչի,

Եղջիւր ծագեալ Աւրելեցի,

Որդի Հետար մեծ իշխանի:

Տապանաքարերի վրայ.

Զհայր տեան Սարգսի զՅովսէփ յիշեցէք ի Քս.

Զհայր տեան Ստեփաննոսի Տէր Դրիգոր. յիշեցէք.

Մի խաչքարի վրայ.

Գնեալը արեամբ զառին Այ. Երկրպագողը սրբոյ  
խաչիս զՄիթթար քահանայ հանգերձ ծնողաւը (յիշեցէք):

Ժամատան հիւսիսային պատի օրմասեան վրայ.

Ես Արաս կանգնեցի զխաչս որդուոց իմոց Սմբատայ  
եւ Դաւթի, որ կիսաւրեայ փոխեցան առ Քս. եւ թողին  
ինձ կսկիծ. որը Երկրպագէք յաղաւթս յիշեցէք. ամէն:

Մի խաչքարի վրայ.

Ես Եղիշայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկու-  
թիւն հաւրեղբաւը իմոյ Առաքէլ եպիսկոպոսին. թվին  
ՌժԲ (—1569).

### ԵՂԵԶԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐԼ

Տեղաղբութիւն.—Եղեղիսի եկեղեցիները գտնւում են այժ-  
ման Ալագեաղ գիւղում, որ համանուն ձորի ամենաշանաւոր  
զիւզն է, այժմ թուրքարնակ:

Պատմական տեսութիւն.—Եղեղիս կամ Եղեղիք հին պատ-  
մական զիւզը, որ այսպէս հոչուել է շրջակայ եղեղնի լճակների

պատճեռով, այժմեան Ալագհազ գիւղն է, որին իրը ապացոյց կարող է ծառայել նախ այն, որ Ս. Օքքելեանն ասում է. «Երանելի եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յՆդեզեաց ծորի ի վերայ Ռաստին զեղջն\*»; Իսկ Ռատին գիւղը այժմեան Հոստուն գիւղն է, և Ալագհազի ձորը նրանից վերև է զանուռում: Երկրորդ՝ այս անունը պահպանուել է Վայոց-ձորի բնիկ Հայերի մէջ, նրանք Ալագհազի ձորին Ըղեցայ ծոր են անուանում: Իսկ Ըղեցը Եղիգի ասմկան մէն է:

Եղիգիսը երբեմ Վայոց-ձորի յշխանների, Սիւնեաց երկրորդ հարստութեան բոլոր տէրերի և յեայ Օքքելեան իշխանների աթոռանիստ է եղել, ուստի և ոչ միայն գիւղաբաղաք, բաղաց, այլ և մայրաքաղաք է կոչուել: Այս գիւղի հիմնարկութեան ժամանակամիջոցը յայտնի չէ, և ըստ երևոյթին շատ հին է: Սիւնեաց իշխանութիւնը վասակ նահապեանից նորոգուած միջոցին սա է զարձել աթոռանիստ, ինչպէս յայտնապէս վկայում է վասակի թռոնորդի Մմրատ Մեծի վերաբերութեամբ, որ Բշրայ կամ նորայ արշաւանքի ժամանակ, 923 թուին «Հորդան տուեալ զօրացն» ամրոխս բաղումս պայակոյտ զօրու շուրջ գիւրեալ կացուցանէր յիւրաւմ արքունական պապանքն՝ որ ի գիւղաբաղաքն եղեցիս, եկեալ ապա նորն և տեսեալ զնա այսպիսի պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ, զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անոտի, այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա... ուխտ հաշտութեան հաստատէր: Եւ ապա եկեալ առ միմանս ինդութիւն մեծ առնէին և բազում օժիտու և պարզեւս ընկայեալ նորն ի Մմրատայ՝ չուէ և երթայշ\*\*):

Մի ուրիշ տեղ էլ նոյն Օքքելեանն ասում է այս Մմրատ իշխանի մասին 936 թուին ... Ենիւալ յաւուր միում յարքունեաց իւր՝ որ էր յԵղեցիս գիւղաբաղաքիւ, Մրա վերջին պայազատներն իրնց գանց փոխել են Բաղաց և Կազանի մէջ: Բայց երբ Զաքարէ և Խվանէ պատալարներն այս կողմերը խլել են թուրքերի ձեռքից, առւել են Օքքելեաններին, որոնցից Ելիկումը և արտ որդի Մմրատն իրենց գան այստեղ են հաստատել: Մմրատի եղբայր Տարսայինը ևս ինչպէս այստեղ, այնպէս և Արփայում ունեցել է արքունիք:

Եղիգիս կամ այժմեան Ալագհազ գիւղում կան չորս աւերեկեղեցիներ, որոնց մասին ոչ միայն պատմական տեղեկութիւններ չկան, այլ և անուններն որոշապէս յայտնի չեն: Միայն 1495

\*.) Օքքելեան գլ. Մ. յիշ. Պաշտերունի:

\*\*) Օքքելեան, ԱՅ.

թուին, այս բամայրաբաղաք Եղեգիսում զրուած մի տեսարանի յիշատակարանում ասուած է. ընդ հովանեաւ երից տաղաւարացս սուրբ կաթուղիկէին եւ : որ. Աստուածնիս և սուրբ Ստեփաննոսին և կննդանարար սուրբ Նշանիս<sup>\*)</sup>): Այսուեղ թէն ասում է ընդ հովանեաւ տերից տաղաւարաց, սակայն չորսի անուն է տալիս, և չէնց չորս աւել նկեղեցիներ էլ այժմ կան: Սրանցից առաջինը, ինչպէս երևում է իւր վերայի արձանագրութիւնից, շինուած է Ստեփաննոս եպիսկոպոս Օքրելեանից, այս պատճառվ և հաւանական է, որ ս. Ստեփաննոսը ամ լինի, այսպէս կոչուած իւր հիմնարքի անունով: Միւսների մասին ոչ մի տեղեկութիւն չկայ:

Նկեղեցիների Նկարագրութիւնը.— Ս. Ստեփաննոսի եկեղեցին (ԺԴ. գար): Սա զանում է այժմեան գիւղից դուրս, նրա արևելեան կողմը Ալագեազ գետի աջ ափին, հարթութեան վրայ, Սու միանգամայն ինքնատիպ է նրանով, որ կողակի մասն իւր երկու խորաններով մի առանձին չէնց է ներկայացնուած, այնպէս որ նոյն բակ կարելի է ենթագրել, որ նրա առջև շինուած ժամանան հասարակ շէնքն սկզբում չէ եղել, և ժողովուրդը, մանաւանդ զօրքը, կանգնել է սեղանի առջև տարածուած ընդարձակ դաշտի վրայ և լսել ժամասացութիւնը: (Տես Ալոս, պատկեր XX, 33),

Այս առաջի մասը, այսինքն կողակը, իւր երկու խորանով (նկ. 28-30) շինուած է սրբատաշ, կարմրաւոյն քարով. ունի 5,30

մետր երկարութիւն և  
10,35 լայնութիւն,  
Բարձրութիւնը հաս-  
նում է 9 մետրի: Ար-  
տաքառսա սազաշն է,  
սակայն ներքուսա, կո-  
ղակի ձեղունն ոչ թէ  
թագակառ՝ այլ գմբե-  
թաձն է կողակը բո-  
լորաձն է և կամարա-  
կապ, յանկած երկու  
որմնասիւների և եր-


կու սիւների վրայ. սակայն վերջիններս արդէն գետին են տա-  
պալուել: Կամարներից բարձր, տարող արևմտեան նակատը ծած-

կուած է սրբատաշ քարով, ունի մի նեղ և երկար պատճեան և

<sup>\*)</sup> Ալբան. Միասնական եր. 149.



Նկար 28



Նկար 29

զարդարուած է երկու խաչքարով. Սեղանի երկարութիւնն է 4,70 մետր, լայնութիւնը՝ 4,50 մետր. վէջարը դեռ կանգուն է, միայն յատակի սալքարերը բանդուած են և մի մասը տարուած:


Կողակի երկու կողմի խորանները թաղակապ են, և մետր երկարութեան և  $1\frac{1}{2}$  մետր լայնութեան, և ունին մի մի սեղան, մօսաւորապէս մի մետր երկարութեան: Հիւսիսային խորանը երկու դռու ունի, մինն արևմտեան, միւսը Հարաւային պատի մէջ, որ անմիջապէս բացւում է սեղանի վրայ: Հարաւային խորանը միայն ունի մի, արևմտեան, դռուն: Երկու գաներն էլ զարդարուած են պայտաձև կամարով: Երկու խորանն էլ լուսաւորւում են մի մի, փոքրիկ և նեղ պատուհանով, որ բայցւում են արեւելեան պատի մէջ:

Կողակի արեւելեան պատի մէջ կան երկու ներսաւնկուած, արեւակնային ճաճանչով և փոքրիկ կամարով զարդարուած. սրանց միջն մի երկար ու նեղ պատուհան՝ խաչածք շրջանակով և երկու վարդաղարդով: Երկու վարդաղարդ էլ բարձրուում կան: Մի մի փոքրիկ

և նեղ, կամարակապ պատուհան բացւում են խորանների մէջ:

Հարաւային պատը բուրովին պարզ է և ունի միայն մի փոքրիկ, կամարակապ պատուհան. ճիշտ այսպէս է և հիւսիսային պատը, որի սրբատաշ քարերից շատերը թափուած են:

Այս շինըի առջև երկու ժամատուուն մնում են հասպակ քարից շինուած և կիսաւեր



Նկար 30

պատեր՝ մօտ մի մետր բարձրութեան։ Այս ժամատան լայնութեանը նոյնն է եղել, իսկ երկարութիւնը 9,70 մետր, Ունեցել է միայն մի, հարաւային, դռւուր:

Եկեղեցու շուրջը կան բաւականաչափ գերեզմաններ, ժղ. դարու տապանագրերով։ Այս տապանագրաբերի մեծագոյն մասն այժմ վերցրել են և տեղը ցանելի նկատելի են և խցերի հետքեր։

Այս եկեղեցին պարսպապատ է եղել, որի արևելեան և արևմտեան կողմի գոներն այժմ չեն կանգնուն են։

Արծանագրութիւններ.—Ս. Մտեփաննոս եկեղեցու արևելեան կողմի մի տապանագրաբի վրայ։

Թվ. 228 (=1333). Այս է հանդիսատ Խաւշին դուստր Դոփենց պարունակամին։

Ս. Մտեփաննոս եկեղեցուց փոքր ինչ հեռու, դէպի արևելք, քարաժայոի ստորոտում մօտ 3 մետր բարձրութեան մի խաչքարի վրայ։

Թ. Հայոց Զիմ. (=1279) ի բարեպաշտ իշխանութեան Տարսային հինչանին Շիրինշահի որդի Դրիգոր կանգնեցի խաչս ի...ամուսնոյ իմոյ և զաւակաց իմոց։ Ած. ողորմի Ցիկո...

Ս. Մտեփաննոսի արևելեան կողմի ձախակողմեան խաչքարի վրայ։

Քրիստոս ողորմի հզնատիոսին։

Ս. Մտեփաննոս եկեղեցու արևելեան կողմը, լուսամտի հակատին։

Ես Տէր Մտեփաննոս որդի իշխանաց իշխանի մեծի Տարսային հիմարկեալ շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հաւը իմոյ...

Նոյն լուսամտի հզրերին։

Տէր Յիս. Քս. Ած. աւգնէ Բուրթէլին Բէշընին եւ Իվանէին։

Ս. Մտեփաննոսի մօտ մի քանի խաչքարերի վրայ կան հետևեալ տապանագրերը։

Թվ. 28 (=1253). Կամաւն Աստուծոյ ես Մարգարէս կանգնեցի զխաչս ի բարեխաւասութիւնն հոգոյ իմոյ եւ ամուսնոյ իմոյ եւ զաւակաց իմոց։

Ես Մինիթար կանգնեցի զխաչս հաւըն իմոյ Ամլկան եւ մաւրն իմոյ Ամիսթէ։

Ս. Ստեփանեսոսի մօտ մի քանի տապանաքարերի վրայ.


Թվին 22Դ (=1344) Այս է հանգիստ պարոն Վաղ թանգին որդւոյ պարոն Ռմելկին:

Այս է հանգիստ Փռանակշահի թվ. 2ՀԴ (=1325):

Թվ. ԶՄԼ (=1508) Այս է հանգիստ Սիմէսնի:

Այս է հանգիստ Նմալոնի:

Երկրորդ նկեղեցին. (ԺԿ. դար).—Ս. Ստեփանեսոս եկեղեցուց գէպի արևմուտք, մօտ հարիւր մետր հեռու, նոյն հարթութեան վրայ և նոյն գետակի աջ ափեն բարձրանում է երկրորդ եկեղեցին: Սա շինուած է սե, որբատաշ քարով, 7 մետր երկարութեան, 3,25 մետր լայնութեան և անհամեմատ մեծ, մօտ 13 մետր բարձրութեան (տես Ալբոմ, պատկեր XX, 34), Ներքուստ (նկ. 31 և 32) անսիւն է, միայն արևմտեան կողմում ունի բաւական յառաջացած երկու, կիսաբրդոր որմասիւներ, որոնց և սեղանի կողքերին բարձրացող կեղծ որմասիւների վրայ բոլորում են կիսաբրդոր կամարներ՝ կը եւովկ իրենց վրայ հաթուղիկնեն, որի թմբուկը 3,50 և զմբէթը 3 մետր բարձրութիւն ունի: Գմբէթը ներսից գեղազարդուած է կարմիր ու սև խաչքարերով: Նկեղեցին աւանդաներ չունի: Հիւսիսային պատի մէջ եայ մկրտութեան մի գեղեցիկ աւագան:



Նկար 31

Են, միապահող, մի մի փոքրիկ, կամարակապ պատուհաններով, որմանցից Հարաւայինի վերին մասում քանզակուած է երկու կիշապի բնրանաբաց զլուխներ՝ իսկ ներքեւում արեգակնային ժամացոյց:

Գմբէթը զանաձն է, չորս փոքրիկ պատուհաններով և վերջանում է կոնաձն զագաթով: Խաչը չկայ:

Արևմտեան կողմի միակ, կամարակապ դռան առջեւ եղել է մի գտւիթ, որի հմամապտերն են այժմ նկատելի, և որի մէջ մի խաչքար կայ ԶՄԼ (=1505) թուականով:

Այս նկեղեցին ևս պարսպապատ է եղել, որից մերւ են միայն հմամապտերը:

Նկեղեցու շուրջը ընդարձակ գերեզմանատուն է եղել, որի մասին մի խաչքարի վրայի տապանագիրն ասում է. «Ես Ապլիկ զնեցի զայս հողս ԾՀ ղիկանի եւ արարի զերեզմանատուն Հայոց»:

Տապանագրերի մեծագոյն ժամը ԺԴ. դարից են:

Այս եկեղեցու հարաւային կողմում, մաս 25 մետր հեռու կայ մի տափարակ զերեզմանաքար, որի չորս կողմը կիսաւեր պատեր կան և մի գուան: Տապանագարի փորուածքի մէջ ամրացրուած են սպիտակ մորմարինի քարեր որոնց վրայ գրուած է հոյերէն և պարսկերէն:

...Զհողիս ճշմարիտ հաւատով եւ ուղիղ սրտիւ եւ լի շնորհաւը նահատակեցաւ եւ Քրիստոսի լուսոյն արժանի եղեւ, եւ Քրիստոսի ողորմութեանն հասաւ... ամենայն ցաւոց բժիշկ... յազօթս յիշեցէք եղրաբը մեր սուրբ Ներսէս... վասն անուան Քրիստոսի:

Ալագնազ գիւղի թուրքերն այս գերեզմանը մահմեդական նահատակի համարելով պաշտում են և ուխտ գալիս:

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանը տեսել է այս եկեղեցու պարտօնի հարաւային կողմում մի կիսաբոլոր զէմ, որի վրայ քանդակուած է եղեւ երկու արձան: ՎԱԱԶՅԱՆ՝ այր փառաշուշբ բազմեալ ի ճարտարագանգակ աթոռ՝ թագ ականակուռ ի զլուխն, և զայխան ի ձեռին, զգեցեալ զգեղնաւոր վերտրեկու՝ որոյ թշանց ծածկէ զուս, իսկ երկրորդն կին զեղեցկատիսիլ, ի պճնազարդ և ի ծալծալ հանդերձ շշեղացեալ, ունենով ի պարանոցին զմենանդ և զմահիկ, զմի ձեռն ի ծնութիւն թիկն զաթոռովն ածեալ, և միովն աշակեալ ընդ առն, և որպէս երեխ՝ է քար զբանզի տան Տարսային իշխանաց իշխանին, և յայոցին արձանաց մինն է Տարսային իշխանն և միւսն ամուսինն իւր ՄԵԽՆԱ խաթուն՝ գուատր Զալալ իշխանի. ըստ որում ինձին վիմի զրի. ՎԱՍՏՈՒԱԾ շնորհաւոր առնէլ զարբաս պարոն Տարսայինի եւ ամուսինը իւրոյ ՄԻՆԱՅ խաթունին, ի թվին Հայոց ՁԼՊԳ:

Այս չափազանց հնագրքրական քարը տեսել է նաև Քաշքերունին<sup>ա)</sup>, և նաև ատակի սատուուին հնագ քայլ գէպի հիւսիս, առում է նա, զէպի գմբէթաւոր եկեղեցին, հողի տակ թաղուած է երկու կտորից բաղկացած կիսաբոլորակ քար, բարձրութեամբ մօտաւորապէս երեք արշին, իսկ երկայնութեամբ չորս արշին: Ստորը կտորը ներկայացնում է երկու մարդոց կերպարանքներ աթռաների վրայ բազմած: Չննողի աջ կողմից նստած այր մարզը հագած է երկայն շորեր և փեշերի տակից երեսում են ուների միայն թաթերը. նորա բաց զլուխը շըխապատած է լուսեղէն ճառագայթներով և մանեակը զարդարում է նրա պարանոցը: Նոր

ա) Հանապարհորդութիւն, Բ. Հ. եր. 284:

այ) Ճառագայթ, Նկատողութիւնը. Արարտ 1888 եր. 435.

աղ ձեռքը դրած է ծնկան վրայ, իսկ ձախ ձեռքը քարի հետ կոտրուծ անհետացել է:

Այս մարդու աղ կողմում, միւս աթոռի վրայ բազմած է մի



կին, նոյնպէս երկար շորերով և տակից երեւում են միմնանց վերայ ծալած ոտերը: Սորա աղ ձեռքը դրած է իւր գօտկում, իսկ ձախը համապատասխան ծնկան վերայ, երկու ականջի առաջի կախուած են ոլորած կարճ զլխամազերը, ինչպէս այժմ:

ևս առվարտութիւն է թիֆլիսում... Նրա զլուխը ծածկում է վերի մասը՝ քառանկինի գլխարկի. Այդ պատկերների վերը դրած է ժթի. Չի թ (—1274) Աստուած շնորհաւոր անէ՝ դարապաս պարոն Տարսային Ծինա խաթունին իւր ամուսնաւու:

Ըսթեցողը պարզ տեսնում է, թէ որքան տարբերում է այս մինույն քարի նկարագրութիւնն երկու ճանապարհորդների դրցի տակ, նոյն իսկ արձանագրութիւնը, նրա թուականը միատեսակ չեն արտազրուած: Եւ որովհեան այս քարը եղել է Տարսայի իշխանի պաւատի դրան կամարաքարը, ուստի ես ցանկացայ զանել և լուսանկարել: Եւ որովհեան Քաջքերունին ծածկել էր նրան հողի մէջ, ուստի ես սկսեցի պեղութներ կատարել. այս միջոցին թուրքերն ինձ ասացին, թէ իրենցից մինը գտել է այս տեղից մի քանդակազարդ քար,

կոտրել և տարել իւր առան պարբռապի մէջ զործ ածել, անմիջապէս ես զնացի տեսայ և նկարել տուի (տես նկ. 32): Սա երեք կառոր արած կիսաբոլոր քար է, արգէն յիշուած մեծութեան, և Տարսային ու Ծինա խաթունի բարձրացանգակներով. միայն Ծինա խաթունը չէ թէ Քաջքերունու նկարագրուածի պէս զնովի աջ, այլ ձախ կողմէ է զանւում, կրծքին մանեակ ունի, իսկ զլինին թագ չկայ. Թագ ունի Տարսայինը, կախ ընկած արտախուրակով: Երկուսի գլխի շուրջն էլ կայ լուսապահ: Մրանից վերև կամարաձև երթիղ մինչ զրուած է.

Ած. Ե(ն)հաւոր անէ դարապաս պարոն Տարսային ին Խաթին իւր ւ

Իսկ երկու գլխների միջև ին իւր տառերի տակ իբրև երբորդ տողի վրայ նկատում է մի փակազիք, որ կարելի է կարդալ իբր անա, այնպէս որ կարող է լինել իւր անա աւ:


Ուշագրաւ է, որ գարապաս և պարոն բառերի մէջ Պ. տառը զրուած է երեսը զետի աջ զարձած:

Մըրորդ եկեղեցին զանւում է գլխի մէջ, շինուած է հա-



Նկար 33

սորտակ, ան քարից. երկարութիւնն է 20,50, լայնութիւնը 13,50 և բարձրութիւնը մատ 7 մետր. Եկեղեցին սագաշէն է, չորս ամբողջական և նոյնքան որմեափակ սիւների վրայ (տես նկ. 35) թէ երկարութեամբ և թէ առ ի շեղ (տես նկ. 36) բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով թաղակապ ձեզունը. Այս սիւներով և կամարներով եկեղեցին բաժանւում է երեք մասի (ոս), որոնցից միջինը միւսներից լայն է. Ուսի մի սեղան և միայն երկու աւանդատուն. (3,70 մետր երկ. 3 մետր լայն. և 4,5 մետր բարձ.), Հիւսիսային պատի մէջ կայ աւազան. Խըրացանչիւր պատի վրայ բացուում են երեցական փոքրիկ պատուհաններ. Երկու զաներից արեմտեանց գեղեցիկ շրջանակով պատած է և կամարակալ քարի վրայ քանդակուած է երկու աղաւնիներ՝ ձախինը կնող, իսկ աջինը՝ թաղակիր տղամարդու գլխով. Սրանից բարձր




Նկար 34

կայ մի շրջանակով պատած խորշ, մէջը մի խաչ, տակը զրուած եկեղեցի թվի թօնՄթ. (=1703). (Տես Ալբում պատկեր Խ. 35). Հաւանական է, որ այս թուականը վերաբերի եկեղեցու վերանորոգութեան, մանաւանդ որ եկեղեցու կողակը անհամեմատ աւելի հին տեսք ունի և այստեղի մի հնութիւնից մաշուած միասուղ արձանագրութեան մէջ որոշելի են Սմբատ, Աշոտ, Շահնշահ բանքը \*).

Չորրորդ եկեղեցին զանուած է գիւղից գէտի հարաւ, գետին, բազմաթիւ փլատակների մէջ, Եինուած է եղել որրատաշ, մոխրագոյն քարից. Եկեղեցին եղել է անսիւն (նկ. 34), ունեցել է

\* Քաջըբեռունի. Արարտ. 1888 թ. եղ. 436.

մէջանդում երկու որմասիւն։ Զէ ունեցել նաև խորաններ։ Այժմ  
արանց միայն կիսաւեր պատճը և սեղանի կամարն են մնում։  
Այս եկեղեցու հիստորիային և հարաւայրին կողմերում կան մի  
մի փոքրիկ մատուռ, կիսաւեր դրսւթեամբ։



Այս եկեղեցու հարաւայրին կիսաւեր պատի մէջ կանգնած  
մի խաչարի վրայ կարդացւում է։

Այս է հանգիստ տէր Աւագ քահանային [թ. ԶԼԲ.  
(=1290):

Այստեղ, դեռ ութունական թուականներին եղել է երկու միմեանց կից խաչքար, կիսով չափ թաղուած հոգի մէջ. Սրանց վրայի կիսաբոլոր և դեռ այն ժամանակ ընկած քարի վրայ ծաղկանիւս նկարի մէջ ձեռքբած է եղել Աստուածածնի պատկերը աթոռի վրայ նոսուծ, ձախ ձեռքում աւետարան, և աջ ձեռքի վրայ յինուած Քըրիստոսը. Աստուածածնի գլուխին իջնում է աղաւնակերպ սուրբ Հոգին: Կիսաբոլորակի վրայ գրուած է եղել<sup>2)</sup>).

Աւընեալ Աստուածածին իւր միաձին Յիսուս Քրիստոս Աստուած...

Խաչի ներքին մասում եղել է տապանագիր և Զիր թուականը:

Ալագեազից մօտ երկու կիլոմետր հեռու դէպի Հոստուն գիւղը կան 2 գեղեցկաքանդակ խաչքարեր, հետեւեալ տապանագրերով.

Ի բարեպաշտ իշխանութեան Տարսայինոյ ևս Աւետիս Մխիթարայ որդի Խոցաղեղա... թվին 21.Բ (=1283):

Դիւղից դէպի արևմուտք, գետի աջ տփին, այսինքի մէջ, ուր երբեմն ընդարձակ գերեզմանառուն է եղել զեռ ևս կանգուն է մի գամբարան, որին տեղացի թուրքերը «Մայր Մարիամ»—(Մարիամ անա) են կոչում և պաշտում:

Սա շինուած է ուն, սրբատաշ քարով. մի մետրաչափ, բառանկիւնի պատուանդանի վրայ բարձրանում է  $2\frac{1}{2}$  մետր լայնութեան,  $1\frac{1}{2}$  մետր հաստութեան և 3 մետր բարձրութեան և եռանկիւնածն վերջացած մի շնչք, որի արևմուտեան երեսին ամ-

<sup>2)</sup> Քաջբերունի. Արտաք, 1888 թ. էր. 444.

բացըած է մի մեկ խաչքար, գեղեցիկ քանդակներով և շրջանակներով եղբայրակուած։ Խաչի վերին մասում քանդակուած է Յիսուս Քրիստոս՝ աթոռի վրայ, կողքերին Աստուածածին և Յովհաննէս Մկրտիչը։ Խաչի շրջանակի շուրջը գրուած է (անս Ալբոմ պատկեր ՀՀ 36)։

Այս զայխոն մինեալ արեամբ աւծելոյն Յիսուսի, կանգնեցաւ իշխանութեամբ Բուրժէլին։ մեր Գըրիզոր եւ Մխիթար (ի) բարեխաւութիւն մեղ և ծնողաց մերոց. թվին 22թ (=1240).<sup>4)</sup>

Այժմ սրբ հարաւայի կողմի քարերից շատերը թափուած են. խաչի երեսն էլ բաւական քերուած է, որովհետև հիւանդները սովորութիւն ունին բար քսելով խաչի երեսին յառաջացած փոշին հաւաքել և ածել չըի մէջ՝ որպէսզի նրա զօրութեամբ բժշկուին։

## Ա Բ Ա Ճ Է Ս

**Տեղադրութիւն.**—Արաւէսի վանքը բարձրանուած է Այսայի գիշղի մէջ ընկած մի բլրի զագաթին, որի մի կողմից հոսում է համանուն գետակը, Վանքը պարսպապատ է եղել, որի միայն հիմնապատճեն են մատցել այժմ։

Վանքից գէտի հիւսիս, գետի ձախ ափին, բարձրանուած է մի այլ, ժայռապատ բլրը, որի շուրջը ևս, թէպէտ տեղ տեղ, նկատուած են պարապի հնետքեր։ Երեսի սա մի փոքրիկ մարտկոց է եղել, Այսուեղ կան երկու բնական մեծ քարայր։

Թէ այս տեղից և թէ վանքի բլուրից գեղեցիկ տեսարան է բացւում, մանաւանդ դէպի գետի առաջապատճեն եղերը։ Այսուղի կլիման բաւական մեղմ է, Կառքի հանապարհն չկայ, մի կածան է, որ հազարաւոր պայտաներ անելով բարձրանուած է այսուեղ։

**Պատմական տեսութիւն.**—Արաւէսի վանքի հիմնարկութեան տարեթիւը և հիմնարկողի անունը յայտնի չէ։ Վանքի արձանագրութիւնները վկայուած են միայն հիւսեալը։

Ի թվին 2ժթ (=1270) ի աէրութեան փառաւոր իշխանին Սմբատայ և հարազատի իւրոյ Տարսայինին ես նուաստ արեղայ Հայրապետ... կրկին շինեցի զվանս և նորոգեցի զեկեղեցիս, շինեցի զզաւիթս։

Սրանից մի կամ երկու տասնեակ տարի յետոյ, վերոյիշեալ Տարսային իշխանի որդի Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոսը

4) Վերէի առջև պատզրուած է և Ալբոմի Սիւնեալից։

«Մանեալ զի բազում ժամանակաց ժառանգութիւն էր լեռ այս Նորավանից սուրբ ուխտին, հաստատեցի ևս զԱրատէս, որ մեր սեփական հայրենիք էր... ժառանգութիւն և հայրենիք սուրբ և գերաժան դամբարանին մեր Նորավանից»:

Մինոյն բանը յիշատակեռվ իւր պատմութեան վերջին (ՀԱ), զլիում՝ Ստեփաննոս Օքբելեանը յայտնում է, որ Շվան տօթոյ տեղուոյս (Նորավանից) որ յամարայնի չկարէին բնակեց եղիսկողոսն և սպասաւորքն, սահմանեցաց զԱրատէսի վանքնա-

Սարգիս եղիսկողոս Զալալեանը տուժէ, թէ այս վանքի զանգակատան ներսը, արևմտեան դրան տոաջ մի ոգեղեցկակերաց տապանի վրայ գրուծ է եղել՝ «Ստեփաննոս պատանի որդի Կարապետ աղին կրկին նորոգեցի զԱրատէս». Թվին ԶՄԲ. \*

Մինոյնը աւանդում է և Քաջբերունին, միայն տապանագիրը այսպէս է ընդօրինակում.

Ստեփաննոս պատանին շինեց զԱրատէս թվակ. ԶՀԲ (=1533):

Այս միմեանցից բաւական տարրեր, և թուականով 230 տառվ զանազանուող տապանագիրը ես, իմ ուղեկիցներին հետ շատ որոնցից, սակայն չգտայ. Զարմանալի է, որ մինոյն բառը մինը կարգացել է կրկին նորոգեցի, միւսը՝ շինեց.


Մի ուրիշ արձանագրութիւն էլ վկայում է, որ Ստեփաննոս Սիւնեաց եղիսկողոսը տուել է այստեղի երեք եկեղեցիներին՝ սուրբ Սիւնեին, Աստուածածնին և ս. Կարապետին՝ իւր Շվան վիճակին ի Գեղաքունոյ զգեղն Վանեվան, զիիտանոցն, զՓառագունի, Վասակաշէն, գԵրիկարին, Խուլինակն, Քութարանց, զԴարրանան:

Մի նշանաւոր արձանագրութիւն էլ վկայում է, որ Խադրակայ որդի Վասակը, որ կողմանակալ է եղել Գառնիից մինչև Բարկուշատ, 1220 թուին, ուրեմն եկեղեցու վերաշնութիւնից առաջ, այրել է Եկեղեցաց ձորի ամրոցներին, որի համար և այս և Նորավանից վանքերի միաբանութիւնները Պ. պատարագ են հաստատել:

Վանքի նկարագրութիւնը. — Արատէսի վանքը (նկ. 37, տես Ալրոմ. պատկեր ԽՍԼ. 31 և 32) բաղկացած է երեք եկեղեցիներից (Ա. Յ. Յ.) և մի գաւթից (Ա.): Ինչպէս երեսում է գաւթի հարաւային պատի արձանագրութիւններից՝ եկեղեցիների անուն-

\*). Ս. Զալալեան ճանապարհորդութիւնը ը. Հ. եր. 158:


ներն եղել են ո. Միռն, ո. Աստուածածին և ո. Կարապետ, միայն  
Հայութաւորութիւն չկայ որոշելու, թէ այս անոններից որը ճը-  
եկեղեցուն է արուած, Երեք եկեղեցիներն էլ միմւանց կից են,  
արեւելեան կողմից միանոյն գծի վրայ, միայն արևմտեանից՝ հիւ-



սիսային եկեղեցին փոքր ինչ յիտով է: Գաւիթը բարձրանում է  
հարաւային ամբողջ և միջին եկեղեցու կիսի առջև:

Հնագոյն կամ հիւսիսային եկեղեցին (նկ. 37 և 4 38) շին-  
ուած է ոն, որբատաշ բարից, երկարութիւնն է 9 $\frac{1}{2}$ , լայնու-  
թիւնը 3,90 և բարձրութիւնը՝ մոտ 8 մետր: Եկեղեցին անսիւն

է, մի սեղանով, որ բանում է ամբողջ լայնութիւնը և ունի բոլորածնե կողակի Սեղանի աշ կողմում կայ մի մեծ աւանդատուն (Նկ. 39), որ շինուած է միջին եկեղեցու տարածութեան մէջ, երկու այլ աւանդատների կոց և գուռը սեղանի կողքից է: Նոյն սեղանի ձախ կողքում էլ կայ մի ուրիշ աւանդատուն, որի գուռը սեղանի վրայից է: Այս աւանդատունն էլ եկեղեցու տարածութիւնից գուրած է և իւր առջևում մի ուրիշ աւանդատունն ևս ունի, որի մէջ մի գուռ բացւում է այս եկեղեցու արևմտահիւսային կողմից: Այս երեք աւանդատներն էլ կամարակապ սեղաններ ունին:



Նկար 38

Նեղ պատուհան, Մի մի փոքրիկ պատուհան էլ բացւում են աւանդատների մէջ:

Հարաւային պատի վրայ, աւանդատան գուռն մօտ, կայ մի սրբուակի բարձրաբանդակ, 40 հարիւրամեռ բարձրութեան:

Արևմտեան պատի մէջ բացւում է մի գուռ, որ արտաքրուած էլ մի զարդարանը չունի: Սրբ ձախ կողմի քարերից մինը, որ զանով միւսներից փոքր ինչ տարրերում է, բայց կանոնաւոր կերպով գրուած է, իւր վրայ կրում է մի գեղեցկաքանդակ խաչ՝ հետեւել արձանագրութիւնով. Ար, Խաչը կանկիցնցոցի Յուլպէկին թվ. Ռ123 (=1626).

Եկեղեցու պատերից միայն արևմտեանի վրայ կան քանդակներ. պատուհանը եպրափակուած է խաչաձև զրջանակով և բարձրում մի գեղեցիկ զարդարդ ունի:

Եկեղեցու հարաւային և հիւսիսային պատերին կոց բարձրանում են քառանկիւնի որթասիւներ, որոնց վրայ գէպի ձեղունը բոլորում են պայտաձև կամարներ: Ձեղունը թաղակապ է և մեծ մասը խոնարիււած:

Արևելեան և արևմշտեան պատերի մէջ կան մի մի երկար և



Նկար 39

Այս եկեղեցու հարաւային պատի մէջն էլ կայ մի դռւուն, որ բացում է մի ինքնառափող շնչքի մէջ: Վերջինս մի քառակուսի գաւիթ է և արևելքան կողմը, առաջին եկեղեցու աւանդառային կից ունի երկու, միմեանց մէջ բացւող աւանդառներ կամ մատուններ (Նկար 37 Բ և Հ)

Բուն զամբլը 5,5 մետր երկարութիւն ունի, նոյնքան էլ լայնութիւն և մաս 6 մետր բարձրութիւն: Անսիւն է, միայն հարաւային և հիւսիսային պատերի մէջ կան երեքական քառանկիւնի որմասիններ, որոնց վրայ, պատերին կից, բոլորում են կիսարորոր կամարներ, յառաջացնելով 35 հարիւրամետր խորովեան խորշեր, ամբողջովին ծածկուած արձանագրութիւններով:


Արևելքան պատի մէջ կայ մի երկար և նեղ պատուհան, սրա ներքը մէկը միւսի տակ երկու խաչքար. մի քիչ հեռու, աջ կողմում, մի ուրիշը:

**Զեղունը ներգուստ թաղակապ է, իսկ արտաքրուստ՝ տակացն.**

Արևելքան պատի մէջ բացւում է մի դռւուն մի փոքրիկ, 3,15 մետր երկարութիւն, 1,40 մետր լայնութեան և մաս 3<sup>1</sup>/<sub>2</sub> մետր բարձրութիւն թաղակապ աւանդառան կամ մատուռի մէջ, որ ունի մի բոլորան սեղան և մի փոքրիկ ուղամ՝ արևելքան պատի մէջ: Այս աւանդառան հիւսիսային պատի մէջ բացւում է մի ուրիշ դռւուն դէպի մի ուրիշ, նոյն մնխութեան և նոյնպիսի աւանդառան կամ մատուռան մէջ, որ ուզասի փոխարքն ունի մի նեղ և երկար պատուհան: Այս աւանդառան կից է, միայն անհաղորդ, առաջին եկեղեցու աւանդառունը:

Գաւթի արևմտեան պատի մէջ ևս բացւում է մի ուրիշ դռւուն, որ աւանում է դէպի գեղեցկաչն, երկրորդ զամբլը, որ շինուած է յատկապէս երրորդ, ամենագեղեցիկ, եկեղեցու առջն Նախ նկարագրենք եկեղեցին, որ կից է առաջին գաւթին և նրա մատուռներին:

Սա շինուած է սե, սրբատաշ քարից. Երկարութիւնն է 9,50, լայնութիւնը 6,75 և բարձրութիւնը՝ մաս 6 մետր մինչև կաթուղիկէն, որ քաննգուած է: Նոյն վիճակին է ենթարկուած նաև մեղունը և հարաւային պատն ամբողջովին՝ կոշկոռները լցուած են նաև եկեղեցու մէջ:



Եկեղեցին ներքուստ անսիւն է։ Ունի երկու աւանդատուն՝ իսկ արևմտեան կողմում՝ նախնական աւանդատների փոխարէն, նոյն մեծութեամբ կամարակաղ խորշեր։

Վեց որմեսոիւների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ, որոնցից միայն արևմտեան կողմում բոլորողներն են կանգուն մազեր (Տես Ալրում ՀՀ. 35)։ Որմեսոիւները բաղկացած են մի կիսաբոլոր և որա կողքերին երկու քառանկիւնի կիսամիւներից, կիսաբոլոր և քառանկիւնի խոյակով, և երեք նոյնպիսի, միայն հակաղիր խարիսխով։ Մեզանց կիսաբոլոր է, (առև Ալրում ՀՀ. 36) բոլորաձև կողակով։ Խըրաքանչիւր պատի մէջ կայ մի մի ներ և երկար պատունա։

Արտաբուստ՝ արենելեան պատի մէջ կան երկու ներսանկուած՝ հաճանշաւոր արեգակով պատկուած։ Սրանց միջն բացւում է մի նեղ և երկար պատունան, գեղեցիկ շրջանակով եղբափակուած։ Նոյնպիսի, միայն համեմատարար աւելի փոքր պատունեներ, բացւում են խորանների մէջ։

Չորս գեղեցիկ խաչարեր գարդարում են արենելեան հակառ։

Հարաւային պատը մեծ ժամամբ քանդուած է, նուում է միայն արևմտեան կամարի մասը, ուր կայ մի ներսանկուած և մի արեգակնային ժամացոյց՝ հայկական թուանշաններով։

Արևմտեան պատի մէջ բացւում է մի դուռ դէպի գաւիթը (Տես ալրում պատկեր ՀՀ. 33),

Հիւսիսային պատը ծածկուած է կողքին շինուած առաջին գաւթի պատով, որ աւելի հասարակ է։ Մի նեղ և երկար պատունան, գեղեցիկ շրջանակով, բացւում է նոյն գաւթի մէջ։

Այս գաւիթը (Նկ. 37 Դ), որ հաւանօրէն Հայրապետ արեգայի շինածն է մ.թ. գարում, կառուցուած է սև, սրբատաշ քարով։ Երկարութիւնն է 7,15, լայնութիւնը 9,15 և բարձրութիւնը մատ 6 մետր։ Ամբողջ շինթը անսիւն է, թաղակապ և մէջտեղում մի կլոր հերթիկ ունի (Նկար 41 և Ալրում պատկեր ՀՀ. 36)։

Այս հերթիկը արտաբուստ քառանկիւնի հիմք ունի և 1/2 մետրաչափ բարձրանում է ութանկիւնի մետվ։ Ներքուստ շրջանակաձև է, և զանազան արարեսկիներով նեղանալով մատ 70 սունտիմետրաչափ բացւուածքով վերջանում (Նկար 42)։

Գաւթի երեք անկիւններում մի մի, հարաւային և չիւսիւսային պատերի մէջ տեղ նոյնպէս մի մի, իսկ արենելեան և արևմտեան պատերում, գաների կողքերից, երկական, ընդամէնը թորմեսոիւներ են բարձրանում, որոնց վրայ բոլորում են պատերին կից կիսաբոլոր, իսկ ձեղունին կից՝ ուստաձև կամարներ

(Տես ալբում՝ պատկեր ԽՍIII. 36 և 37 և ԽՍV. 38), Արմասիւներից չորսը, որ բարձրանում են դաների մօտ, ներկայացնում են վեցակողմեան կիսառմեր, յանկած քառանկիւնի որմասեան վրայ, եռյակը կիսարոլոր է և քառանկիւնի, իսկ խարիսխը՝ քառանկիւնի:

Միւս վեց որմասիւները կիսարոլոր են և կողքերը քառանկիւնի: Արանց բոլորի բներն էլ միակոտուր քարերից են, 1,60 մետր բարձրութեան:

Գաւթի հարաւային պատն ամբողջապէս քանդուած է. մը նում է միայն մէջանդի սիւնը և նրանից դէպի ձեռունը բարձրացող կամարը, բնշպէս և անկիսների որմասիւները: Կանգուն են նաև հիւսիսային պատի մէջին սիւնն ու կամարը և արեւելեան կամարը, իսկ արևմտեանը քանդուած է:


Արևմտեան պատի մէջ բացվում է մի դուռ, և սրա վերև մի ռոզան, որը միայն ներսից է նկատելի, որովհետև զբու կողմից պատը քանդը ուած է:

Դուռը զարդարուած է կլոր և քառանկիւնի կիսասներով և պայտաձև կամարներով: Կամարակապ քարի

վրայ կայ մի բարձրաբանգակ, որ ներկայացնում է Աստուածածինը՝ մանուկ Ծիսուսը զբկին, աշ կողքին մի կին, ձախին մի միբուսաւոր տղամարդ՝ զաստակները միմեանց յենած և առաջ պարզած: Աստուածածին աշ կողմին քանդակուած է արեւմարդու երեսի ձեռվի: Երկու գեղեցիկ խաչեր քանդակուած են: Կամարի և շրջանակի մէջն Աշ կողմի խաչի մօտ մի փոքրիկ խոչ էլ է քանդակուած:


Արձանագրութիւններ.— Արտէս նկեղեցու դրան ձախ կողմը. (Նկար 43):

Կամար կարող հզաւրին Ալ. ես Ցը. Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս որդի միծի եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայինին, ծանեալ զի ի բազում ժամանակաց ժառանգութիւնի էր լեալ այս եկեղեցիս Նորավանից



Նկար 41

սր. ուխտին հաստատեցի ես զԱրատէս որ մեր սեփական հայրենիք էր իւր ամէն սահմանաւրն գեղս վեց հայրենիք հաւը մեր ժառանգութե և հայրենիք սր. և զերափառ դամբարանին մեր Նորագանից. զոր մի որ իշխսոցէ խախտել և խափանել կամ յիշխանաց կամ ձեռնաւորաց ի մերոց կամ յաւտարաց եթէ հակառակին անէծս և նզովս առցեն ի սր. երբորդութենէն և յամենայն օրբոց և մեր պարտեացն տէր է առաջի Այ. և թէ



Նկար 42.

Խի և հանել ջանայ յԱյ. և յիւր Մահմետէ ապիզար է և Ռ. Ռ. նալաթ լինի.

Սրա տակ.

Կամաւն Այ. ես Նուլունս աղախին Քի. միաբանեցա ի սր. ուխտս Արատէս իւ ետու Ե. ամբարք եւ սահմանեցին միաբանքն զսր. Մարզոի շարաթ աւրն պատարագն ինձ յիշատակ եւ զկիրակէն առն իմո Հասանա. կատարիչըն աւրնեալ եղիցին յԱյ.:


Սրա կողքին, դրան մօտ, ներքուստ.

Ես Թանմելէքս միաբանեցայ սուրբ ուխտիս. միաբանք սահմանեցին սր. Խաչին շարաթ աւրն Ա. պատարագ.

Դաւթի արևելեան պատի միջին կամարի մէջ.

Ի թվին 2ԺԹ. (=1270) ի տէրութեան վառաւոր իշխանին Մմբատայ եւ հարազատին իւրոյ Տարսայինին, ես նուաստ արեղայ Հայրապետ անոն սպասաւոր բանի կրկին շինեցի զվանս եւ նորոգեցի զեկեղեցիս, շինեցի զգաւիթս

եւ զայլ ինչ ոք... զկոչոց՝ այգին յ՛մստին հւ զթեղուտն ի  
...Մնուազաձորում... մը զնեցի եւ տուի ի ո. Սիռնս... հաս-  
տատեցաք զսուրբ Դրիգորին զշաբաթն և կիւրակէն ինձ



Նկար 43.

յիշատակ կըկին... կատարիշը աւրհին յամէն սրբոց, եւ  
հակառակաւզբն տանջեսցին ընդ Յուղայի եւ ընդ Բելիա-  
բայ ի մնծի աւուրն, ամէն:

Ժամատան կամարի վրայ.

Ես Մամարս միաբանեցա եւ ետու զինչ ունէի ոսուրը եկեղեցիս, սպասաւորը սահմանեցին Ա. ժամ պատարագել ի վերափոխման սր. Աստուածածնին. կատարիշըն աւրհնին Աստուծոյ, եւ խափանիշըն դատին ի Տեառնէ.

Գաւթի հարաւային պատի վրայ.


Կամաւ կարող հզաւրին Ա. ես Տէր Ստեփանոս Սիւնեաց արհեպիսկոպոս, որդի մեծի եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայինին ետու սուրբ Սիւանիս և Աստուածածնիս սուրբ Կարապետիս ի մեր սեփական վիճակին ի Գեղարունոյ զգեղն Վանեվան, զկիտնանոցն, զՓառագունի, զՎասակաշէն, զՃիկակարըն, Խուլինակին, Քաւթարանց, զԹամբարարքն, զի թէ որ իշխեսցէ խախտել կամ խափանել ի մերոց կամ լաւտարաց, զիմ պատիժս կը եսցէ յԱ. Այսը սահմանեցաք որ տիրէ մեր նըստագահի ու մեծ իշխանաց իշխան իմ փառաւոր հարազատին Ելիկումին՝ յիշատակն այլ իմաստ իւր կարգած. Կամովին մեր սահմանած կտակս այլ ցեղս զնէ մասն ու բաժին զմւդաի առցէ ու զայլ խաշահանուացն, եւ մեր պարտեացն տէր է առաջի Աստուծոյ, ի թվիս ԶԵ (=1301).

Արտէսի դռան ներսի կողմը (տես նկար 44).  
ԻՌԿԹ. (=1220).

Ի թագաւորութեան վրաց Լաշաին եւ յաշխարհակալութեան հւանէ Աթարէզի, ես Վասակ որդի Խաղբակակալողմապահ ի Գառնո մինչեւ ի Բարգուշատ եւ առի զամբոցանիս նզեղեաց Զորոյս աւգնութերն Ա. ի հայրապետութե Տր Սարգսի եւ առաջնորդքս վանացս եւ Նորափանաց հաստատեցաք Պ. ժամ զՀամբարձմանն զերեր աւըն զամենայն եկեղեցիս Զորոյս՝ Վասակա կատարեն եւ կատարիշըն աւրհնին յԱ. ամէն:

Տապանագրեր.—Եկեղեցիների արևելեան կողմը մի օրորոցաձն տապանաբարի վրայ 28 հարիւրամետր երկարութեան տառերով զրուած է.

Զերդանիկ բարունապետն Հայրապետ նորոգող այսմ  
ուխտի լիշ. թվ. 218 (=1290).



Նկար 44.

Դեռեզրին եղած գերեզմանատան խաչքարերի վրայ.

Թվին 2ԺԲ (=1363) Նշանս Թանկին է. Աստուած  
ողորմի նմա. ամէն:

Թվին ԶԺԳ (=1364) Տէր Աստուած ողորմէ Այսա-  
խուխին. ամէն:

+ Մուրը նշանս Հասան(այ) է, որը կարդաք յիշեցէք  
ի Ք. Թվին ԶԺԵ (=1366).

Մի նորագոյն գերեզմանաբարի վրայ.

Այս է հանդիսատ Սարգսի թվին Ռ.ՃԿԲ (=1713).

Գետեղըին եղած գերեզմանատան մի հասարակ խաչքարի վրայ.

Խաչս բարեխաւս Նատարդուլին որ տղայ հասակ մեռաւ թվին 22 (=1531).

Եկեղեցու արեմտեան դռան ձախ կողմէ քարերից մինչ վրայ քանդակուած է մի խաչ և արձանագրուած.

Մըր խաչս կանկեսցուցի Յուլպէկին թվ. Ռհե (=1626).

Մի տապանաքարի վրայ.

Այս յարկ տապանի Յովսէփու աստուածախաւս վարդապետի. թվ. ԶԼԱ (=1282).

Ժամատան առջն, պարտիզում ընկած մի օրորոցաձև տապանաքարի վրայ.

Այս Միսիթար կիսաւրեայ փոխեցաւ ի Թո եւ եթող սուր անմիսիթար ծնողացն. թվ. ԶԵԴ (=1464).

Ժամատան հարաւային պատի առջն մի խաչքարի պատուանի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Մէհրապին:

Նոյն տեղի մի ուրիշի վրայ.

Մահակ երէցս յաղաւթո. թվին նհԴ (=975).

Նոյն տեղում մի ուրիշ խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Զանաղին:

